caritas europa

ՄԱՐԴԿԱՆՑ ԳԵՐԱԴԱՍԵԼՈՎ ՇԱՀՈՒՅԹԻՑ

«ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ՁԵՌՆԱՐԿ

ՀԻՄՈՒՆՔՆԵՐ
ԿԱՐԻՏԱՍ ԵՎՐՈՊԱՅԻ ՀԱՄԱՐ

Հեղինակներ՝ Ջուլիա Զոննլայթներ (Կարիտաս Վիեննա) և Անտոնիո Ֆանտազիա (Կարիտաս Եվրոպայի քարտուղարություն), խմբագիր՝ Շենոն Պֆոման (Կարիտաս Եվրոպայի քարտուղարություն):

Այս ձեռնարկի պատրաստման գործում իրենց ներդրումն են ունեցել «Կարիտաս Եվրոպա» սոցիալական տնտեսության աշխատանքային խմբի անդամները, որոնք թվարկված են ստորև՝

«Կարիտաս Ավստրիա», Ֆլորիան Պոմպեր (աշխատանքային խմբի նախագահ)
«Կարիտաս Անգլիա և Ուելս» (CSAN), Դեն Բելոսո
«Կարիտաս Ֆինլանդիա», Լարիսա Ֆրանց
«Կարիտաս Ֆրանսիա» (Սեկյող Կաթոլիկ), Իրեն Վալդելոմար Զուրերա
«Կարիտաս Իտալիա», Տիցիանա Չիամպոլինի
«Կարիտաս Լյուքսեմբուրգ», Դանիելա Ռագնի
«Կարիտաս Սերբիա», Մարինա Կոստիչ
«Կարիտաս Իսպանիա», Ռուբեն Ռեկվենա Մորչիլո

Հատուկ շնորհակալություն Ալբերտո Պույոյին (Կարիտաս Իսպանիա), Պատրիկ Դեբուկուային (Կարիտաս Բելգիա), Մարջանա Խնիպին (Կարիտաս Եվրոպայի քարտուղարություն) և Կարիտաս Եվրոպայի շահերի պաշտպանության ղեկավար խմբի անդամներին՝ իրենց արժեքավոր ներդրման համար:

Հրատարակված է 2018-ին նոյեմբերին «Կարիտաս Եվրոպա» հրատարակչության կողմից, Մերսի փողոց, 43, 1210 Բրյուսել, Բելգիա:

Սույն ձեռնարկը ֆինանսական աջակցություն է ստացել Եվրոպական միության «ԷԱՍի» Զբաղվածության և սոցիալական նորարարության ծրագրի շրջանակում (2014-2020 թթ.): Լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք խորհրդակցել. **http://ec.europa.eu/social/easi**

Սույն ձեռնարկում տեղ գտած տեղեկատվությունը պարտադիր չէ, որ արտահայտի Եվրոպական հանձնաժողովի պաշտոնական դիրքորոշումը:

Կարիտաս Եվրոպան իրեն իրավունք է վերապահում պատասխանատվություն չկրել սույն ձեռնարկում ներկայացված տեղեկատվության ճշգրտության և ամբողջականության համար: Այսպիսով, տրամադրված ցանկացած տեղեկատվության օգտագործման արդյունքում պատճառված վնասի համար պատասխանատվության պահանջները, ներառյալ թերի կամ սխալ տեղեկատվություն, կմերժվեն:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Նախաբան 4
2. Ի՞նչ է կարելի գտնել այս ձեռնարկում 4 5
3. Ի՞նչ է «Սոցիալական տնտեսությունը» Կարիտասի համար 5 6

ՄԱՍ 1. Ինչո՞ւ է Կարիտասը նպաստում «Սոցիալական տնտեսության» խթանմանը 8

1.1. Ինչպե՞ս է «Սոցիալական տնտեսությունը» նպաստում Կաթողիկե սոցիալական գաղափարախոսության տարածմանը և աջակցում Կարիտասի հիմնարար սկզբունքներին 9

1.2. «Կարիտաս» կազմակերպությունների համար «Սոցիալական տնտեսության» 9 ձեռնարկությունների օգուտը 11

1.3. Ինչպե՞ս է «Սոցիալական տնտեսությունը» նպաստում առավել կայուն և համախմբված հասարակություն ունենալուն 16

1.3.1 «Սոցիալական տնտեսությունը» և «Կարիտասի սոցիալական մոդելը» 16

1.3.2 «Սոցիալական տնտեսությունը» և «Օրակարգ 2030-ը» 17

1.3.3 «Սոցիալական տնտեսությունը» և Սոցիալական իրավունքների եվրոպական արժեքները 20

ՄԱՍ 2. Կարիտասի կողմից «Սոցիալական տնտեսության» ուղղությամբ տարվող գործնական աշխատանքը 24

2.1. Նպաստել այնպիսի էկոհամակարգի ստեղծմանը, որտեղ «Սոցիալական տնտեսության» ձեռնարկությունները կկարողանան բարգավաճել 26

2.1.1 Գործարկել էկոհամակարգը 27

2.1.2 Կառավարության ունեցած դերը էկոհամակարգի զարգացման գործում 30

2.2. «Սոցիալական տնտեսության» ձեռնարկատիրության ստեղծում և կառավարում 32

2.2.1 Գնահատում 32

2.2.2 Գործարկում. բիզնես պլանի մշակում 33

Ի՞նչն է հաջորդը 42

Հղումներ 44

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

1. ԿՍՈՒ - «Կաթողիկե սոցիալական ուսմունք»
2. ՍՏ - «Սոցիալական տնտեսություն»
3. ՍՏՁ - «Սոցիալական տնտեսության ձեռնարկություն»
4. ՄԱԿ - «Միավորված ազգերի կազմակերպություն»
5. ՔՀԿ - «Քաղաքացիական հասարակության կազմակերպություններ»
6. ՏԻՄ - «Տեղական ինքնակառավարման մարմիններ»
7. ԿԶՆ - «Կայուն զարգացման նպատակներ»
8. ԵՄ - «Եվրոպական միություն»
9. ՄՌԿ - «Մարդկային ռեսուրսների կառավորում»
10. ՄՆԵ - «Սոցիալական ներդրման եկամտաբերություն»

ՆԱԽԱԲԱՆ

Այս ձեռնարկը թարմ էներգիայով լի նիզակ է՝ արձակված Կարիտասի ապագային և «սոցիալական տնտեսություն» հասկացության ձևավորմանը՝ որպես իրապես մարդակենտրոն տնտեսություն:

Այս ձեռնարկը նաև անչափ յուրահատուկ և թանկ է ինձ համար: Դեռ 1992 թվականին ես սկսեցի աշխատել «Կարիտաս Իսպանիայի» համար՝ «Սոցիալական տնտեսություն» ծրագրում՝ Պանչո Սալինասի ղեկավարությամբ. մարդ, որ 80-ականների վերջին և վաղ 90-ականներին ղեկավարում էր մի շարժում, որի շնորհիվ Կարիտասն ամբողջ Իսպանիայի տարածքում ստեղծեց մի քանի հազար կոոպերատիվներ՝ առաջարկելով հազարավոր գործազուրկների զբաղվածության մասնակցային սխեման: Հետագայում ես պիտի աշխատեի Անդրես Ագանզոյի՝ մի հրաշալի գործընկերոջ ղեկավարությամբ, որն արմատներով «Կաթողիկե աշխատավորական շարժումից» էր: Նա սկսեց համակարգել և խթանել նոր ձևավորվող սոցիալական ինտեգրման ձեռնարկությունները և իրականացնել նրանց իրավական գործունեության շրջանակի պաշտպանությունը: Իմ գործն այս համակարգման շրջանակներում եվրոպական փորձն ուսումնասիրելն էր. որպես իրական գանձ՝ ես բացահայտեցի Կարիտաս Շվեյցարիայի, Կարիտաս Լյուքսեմբուրգի /համատեղ աշխատանք/, Կարիտաս Գերմանիայի, Կարիտաս Իտալիայի, Սեքյող Կաթոլիկի և այլնի կողմից կատարված աշխատանքը և ունեցած փորձը:

Այսօր՝ 2008 թվականի մեծ ֆինանսական ճգնաժամի տարածումից 10 տարի անց, գործազուրկների, աշխատավոր աղքատների և աշխատանքային շահագործման զոհերի քանակը մնում է չափազանց բարձր: Բացի այդ, սոցիալական հակամարտությունները, անհավասարությունները և բաժանումներն ավելի տեսանելի են: Ֆինանսական ճգնաժամը, դրա արմատները, ինչպես նաև այդ ամենի հետևանքները ցույց են տվել, որ մարդկանց արժանապատվությունը, նրանց բարեկեցությունը, սոցիալական ներառման իրավունքը և մասնակցությունը հասարակական կյանքին մեր երկրներում ստորադաս դեր են ունեցել: «Հակվածություն կա առաջնահերթությունը տալ զեղծարարություններին և ֆինանսական շահի հետապնդմանը, որը հաշվի չի առնում համատեքստը՝ ուշադրությունից դուրս թողնելով մարդկային արժանապատվության և բնական միջավայրի վրա ունեցած ազդեցությունը»[1]: Հետևաբար պարզ է դառնում, որ աղքատությանը հակազդելու միջամտությունները չեն կարող իրականացվել նույն ձևով, ինչպես նախկինում՝ ֆինանսական ճգնաժամից առաջ: Փոխարենը մեզ պետք է նոր մոտեցում, հարացույց և տնտեսություն, «սոցիալական պաշտպանություն» և «սոցիալական համախմբվածություն» հասկացությունները վերաիմաստավորելու նոր ուղի[2]: Չնայած Կարիտասում երկարամյա ավանդույթներով արմատացած լինելուն՝ «Սոցիալական տնտեսությունը» վերագտնում է իրեն՝ նոր, թարմ և հզոր ոճով հարմարվելով նոր իրականությանը: «Սոցիալական տնտեսությունը» մարտահրավեր է նետում մեզ՝ այլ կերպ մտածելու մեր տնտեսության, գործընթացների և հաստատությունների մասին, որոնց միջոցով բավարարում ենք մեր կարիքները: Սոցիալական տնտեսության կազմակերպությունները և սոցիալական ձեռնարկությունները գերադասում են մարդկանց համընդհանուր շահը սեփական շահույթից: Նրանք ներդրումներ են կատարում մարդկանց կարողությունների և ստեղծագործական հմտությունների զարգացման ոլորտում և նպաստում են նրանց հզորացմանը որակյալ աշխատատեղերի ստեղծմամբ և դասընթացների անցկացմամբ: Նրանք առաջնահերթությունը տալիս են սոցիալական նպատակներին և սոցիալական արժեքներին: Վերջին տարիներին «Կարիտաս Եվրոպայի» անդամ շատ կազմակերպություններ ներգրավել են մարդկային աշխատուժ և ֆինանսական ներդրումներ են կատարել աղքատությանը հակազդելու ճանապարհին նորարարական լուծումներ գտնելու գործում, ինչպես նաև ձեռնարկել, կառավարել և խթանել են «Սոցիալական տնտեսության ձեռնարկությունները»՝ որպես աղքատության հիմնական պատճառների լուծման ամբողջական և արդյունավետ ուղի:

Սույն ձեռնարկի նպատակն է կիսվել տեղեկատվությամբ և խոստումնալից փորձով, ինչպես նաև բարձրացնել «Սոցիալական տնտեսության ձեռնարկություններ» հասկացության պատկերացումը Կարիտասի ցանցի շրջանակներում: Կարդացե՛ք, ոգեշնչվե՛ք, եղե՛ք նորարար, հանդե՛ս եկեք նոր նախաձեռնություններով և մի՛ մոռացեք պատմել բոլորին Ձեր հաջողությունների մասին՝ բացատրելով հստակ օրինակներով, թե ինչպես կարող է տնտեսությունը ծառայել բոլորին, մանավանդ նրանց, ովքեր դուրս են աշխատաշուկայից:

Խորխե Նունյե Մայես
Գլխավոր քարտուղար

Ի՞ՆՉ ՓՆՏՐԵԼ ՍՈՒՅՆ ՁԵՌՆԱՐԿՈՒՄ

Սույն ձեռնարկը նախատեսված է բոլոր նրանց համար, ովքեր ցանկանում են խորացնել իրենց գիտելիքները «Սոցիալական տնտեսության» ոլորտում:

Ձեռնարկի մասնավորապես առաջին հատվածը մշակվել է հատուկ Կարիտասի տնօրենների և ծրագրերի ղեկավարների համար: Այն ցույց է տալիս՝ ինչպես «Սոցիալական տնտեսության ձեռնարկությունների» մեջ կատարված ներդրումները և նրանց խթանումը կարող են աջակցել Կարիտասի գործունեությանը և տեսլականին /մենք դիտարկել ենք Կաթողիկե սոցիալական ուսմունքը, Կարիտասի սկզբունքները և Կարիտասի սոցիալական մոդելը/: Սրանով նաև բացատրվում է, թե ինչպես են «Սոցիալական տնտեսության ձեռնարկությունները» նպաստում կայուն սոցիալական ծառայությունների և սոցիալական քաղաքականությունների երաշխավորմանը. մենք դիտարկել ենք մի քանի տեղեկատվական շրջանակներ համաշխարհային և եվրոպական մակարդակներում, ինչպես, օրինակ՝ ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակները և Մարդու իրավունքների եվրոպական հիմնասյունը:

Երկրորդ մասը ուղղակիորեն հասցեագրված է Կարիտասի փորձագետներին և հիմնված է սոցիալական տնտեսության ոլորտում Կարիտասի կողմից գործունեություն ծավալած տարբեր երկրներում գրանցված փորձի վրա: Այն մեկնում է Կարիտասի գործնական աշխատանքը և վերլուծում ամենակարևոր ասպեկտները, որոնք անհրաժեշտ է հաշվի առնել «Սոցիալական տնտեսության ձեռնարկություններ» հիմնադրելիս, զարգացնելիս և ներդրումներ կատարելիս: Ամբողջ ձեռնարկում կարելի է գտնել նաև 16 ներդիր, որոնք նկարագրում են Կարիտասի՝ տարբեր երկրներում ունեցած փորձը, և որոնք վերաբերում են հիմնական գաղափարին: Այս ներդիրներն ընթերցողին մի կողմից՝ հնարավորություն են տալիս ավելի լավ հասկանալու գրվածը գործնական օրինակով, մյուս կողմից՝ ավելի լավ ուսումնասիրելու Կարիտասի «Սոցիալական տնտեսության ձեռնարկությունների» բազմազանությունն ամբողջ Եվրոպայով:

Բանալի բառեր, «Դինս» ռեստորանի մասին, Բարսելոնա: Լուսանկարը՝ Անտոնիո Ֆանտազիայի

Ի՞ՆՉ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԻ «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ» ԿԱՐԻՏԱՍԻ ՀԱՄԱՐ

Սոցիալական տնտեսության ձեռնարկությունները գերադասում են մարդկանց օգուտը սեփական շահից: Նրանք փորձում են նորարարական լուծումներ առաջարկել հասարակության կողմից վերհանված սոցիալական, տնտեսական և շրջակա միջավայրի կարիքներին, որոնց հանդեպ պետական և մասնավոր ոլորտների անդրադարձը եղել է անհամաչափ և ոչ տեղին:

Միևնույն ժամանակ «Սոցիալական տնտեսության ձեռնարկությունները» նախատեսված են շահույթ ստեղծելու համար: Նրանք գործում են ըստ շուկայի տրամաբանության՝ ապահովելով ապրանքներ ու ծառայություններ և որպես առաջնահերթություն ունենալով հաճախորդների գոհունակությունը: Հիմնական տարբերությունն այն է, որ «Սոցիալական տնտեսության ձեռնարկությունները» սեփական հարստություն դիզելու փոխարեն ներդնում են իրենց շահույթը սոցիալական խնդիրների լուծման գործում.

- «Սոցիալական տնտեսության ձեռնարկությունների» վերաբերյալ քննարկումների մասնակցության և գաղափարների գեներացման համար հարթակ ստեղծելու միջոցով,
- համայնքում համագործակցությունը, տեղեկացվածությունը և ներգրավվածությունը խթանելով,
- շրջակա միջավայրի պաշտպանությանը նպաստելով:

Ավանդական մոտեցումների համեմատությամբ «Սոցիալական տնտեսությունը» նորարարական և առավել արդյունավետ ուղի է արձագանքելու սոցիալական կարիքներին: Այն ակտիվացնում է կոլեկտիվ հետաքրքրությամբ խնդիրների համար լուծումներ փնտրող բազմաստիճան սիներգիաներ, որոնք ուղեկցվում են խոցելի ընտանիքների և անհատների խնդիրների լուծմանն ուղղված հատուկ գործողություններով: Սա հեշտացնում է խնամքի հեռանկարից դուրս մոտեցումը, ակտիվացնում է փոխադարձության պրակտիկան՝ միևնույն ժամանակ ստեղծելով սոցիալական ու տնտեսական արժեքներ, ինչպես.

- Անհատները հզորանում են, քանի որ սովորում են, թե ինչպես կարող են սկսել իրենց սեփական բիզնեսը: Մյուսները շահում են ավելի որակյալ աշխատատեղերի հասանելիություն և ձեռք են բերում պատկանելության զգացում:
- Համայնքները դառնում են ավելի համախմբված, քանզի «Սոցիալական տնտեսության ձեռնարկությունները» կարող են ֆասիլիտացնել տեղական ներառական քաղաքականությունների զարգացումը և նպաստել տեղական համայնքի ընդհանուր բարեկեցությանը:
- Ողջ հասարակությունը օգուտ է ստանում նորարարական գաղափարներից և լուծումներից, որոնք արձագանքում են հասարակության կարիքներին և նպաստում մտածելակերպի փոփոխությանը:

Սա պահանջում է անհատների և խմբերի ակտիվ մասնակցությունը «Սոցիալական տնտեսության» նախաձեռնություններին՝ ի լրումն տարբեր՝ մասնավոր և հանրային շահագրգիռ կողմերի միջև միասնական համագործակցության: Ուստի սոցիալական, աշխատանքային և տնտեսական զարգացման քաղաքականությունների համատեղումը մեծ նորարարություն է մեր հասարակությունների և «Կարիտաս» կազմակերպությունների համար: Վերջիններս ակտիվորեն ներգրավված են բազմատեսակ «Սոցիալական տնտեսության» ծրագրեր մշակելու գործընթաց ողջ Եվրոպայում[3]:

Եվ վերջապես, «Սոցիալական տնտեսության ձեռնարկությունները» նաև նպաստում են գլոբալ տնտեսական համակարգի վերաձևավորմանը՝ իրենց հիմնական հատկանիշներից մեկի միջոցով: Նրանք հաշվետու են մի շարք «շահագրգիռ կողմերի» և չնայած կարող են մատակարարել ապրանքներ ու ծառայություններ հստակ սահմանված շուկաներում, այնուհանդերձ իրենք անձնապես «շուկայում» ներկայացված չեն: Ընթացիկ շահույթի հսկայական մասն այլևս չի ստացվում ապրանքների և ծառայությունների վաճառքից, այլ բարդ միաձուլումներից, ձեռքբերումներից և ֆոնդային բորսայի քիչ թե շատ բարդ այլ գործառնություններից: Սա բարձրացնում է այսօրինակ ձեռնարկության «դիմադրողականությունը» նմանատիպ «գիշատիչ» և «թունավոր» փորձառնության հանդեպ:

«Մարդու՝ որպես անհատի և որպես համայնքի անդամի բարեկեցությունը տնտեսության գերագույն նպատակն է»:

Հովհաննես Պողոս 2-րդ պապ

ՄԱՍ 1: Ինչո՞ւ է Կարիտասը խթանում «Սոցիալական տնտեսությունը»

Ներածություն

Տնտեսական ու սոցիալական անհավասարությունները հրատապորեն պահանջում են որոշումներ, որոնք նպատակ ունեն ստեղծելու նոր տնտեսական, էկոլոգիական և սոցիալական կարգեր: Պարադիգմային փոփոխությունների ժամանակաշրջանում, ինչպիսին որ այժմ է, մեզ անհրաժեշտ է խիզախության և ստեղծագործական հմտությունների լրացուցիչ չափաբաժին գլոբալ զարգացման նոր գործընթացների ակտիվացման համար, որը հնարավորություն կընձեռի հատկապես ամենախոցելի իրավիճակում հայտնված մարդկանց բարելավելու սեփական իրավիճակը: Խիզախությունն անհրաժեշտ է այնպիսի տնտեսություն զարգացնելու համար, որը կնպաստի ավելի լավ աշխարհ ունենալուն և կյանքի որակի բարձրացմանը, որպեսզի ունենանք հարստության առավել հավասարաչափ բաշխվածություն:

Այս առումով հատկապես կարևոր է կառուցվածքային խորը բարեփոխումների իրականացումը: Սրա համար անհրաժեշտ է նպաստել համերաշխության տարբեր ձևերի հզորացմանը և փնտրել ընդհանուր բարիք առավել կայուն ապագա ունենալու ամբողջ մոլորակի և ողջ մարդկության համար: Սա նաև նշանակում է իրականացնել կառուցվածքային բարեփոխումներ, որոնք միայն կամավորական աշխատանք կատարելու և բարեկեցություն ստեղծելու միջամտությունների հետ կապված չեն: Այս հեռանկարի կյանքի կոչման հիմնարար գործոնը հաջողված երկխոսության կայացումն է հասարակության, պետության և աշխատաշուկայի միջև, ինչպես նաև համերաշխության սկզբունքի և սուբսիդավորման միջև առկա դրական փոխկապակցվածության սահմանումն է: Առաջինը՝ համերաշխությունը, ներդաշնակ կառուցվածքի հիմք է ստեղծում ավելի ներառական և միասնական հասարակության համար: Երկրորդը՝ սուբսիդավորումը, այս նպատակին հասնելու գործիքն է:

Կառուցվածքային խորը փոփոխություններ կատարելու համար ամենախոցելի խմբի մարդկանց վիճակի թեթև բարելավման պարտավորությունը բավական չէ: Տնտեսությունը պետք է փոփոխության ենթարկվի բոլոր մակարդակներում: Իրական ազդեցությամբ լուծումներ պետք է գտնվեն և գործնականում կիրառվեն:

1.1. ԻՆՉՊԵՍ Է «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ» ԽԹԱՆՈՒՄ ԿԱԹՈՂԻԿԵ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈՒՍՄՈՒՆՔԻՆ ԵՎ ԱՋԱԿՑՈՒՄ ԿԱՐԻՏԱՍԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻՆ

Դարերի ընթացքում «Կաթողիկե սոցիալական ուսմունքը» մշակել է ուսուցման ուշագրավ մարմին և իր անդրադարձն է ունեցել տնտեսական ու քաղաքական հարցերին:

Այն արժեքների ամբողջություն և ոգեշնչման աղբյուր է, որը ձևավորում է ժամանակակից հասարակությունների որոշումների կայացման գործընթացները՝ ուղղված համընդհանուր բարիքի ստեղծմանը: Կաթողիկե ավանդույթի համաձայն՝ տնտեսության բարձրագույն նպատակը մարդու՝ և՛ որպես անհատի, և՛ որպես հասարակության անդամի բարեկեցությունն է[4]: Այն ընդգծում է կայուն և պատասխանատու շուկա ունեցող տնտեսության զարգացման կարևորությունը, որը կնպաստի մարդ էակի, հատկապես աղքատների բարեկեցությանը[5]:

Այնուամենայնիվ, կա հստակ պատկերացում այն մասին, որ տնտեսական գործունեությունը պետք է ծավալվի ամբողջական բարոյական շրջանակների համատեքստում: Այս արժեքներն են ազնվությունը և հաշվետվողականությունը, հարգանքը մարդկային արժանապատվության հանդեպ, արդարությունը, նաև անհատների, համայնքների ամբողջական, իրական զարգացման տեսլականը, որը դուրս է զուտ նյութական շահույթ ստանալու շրջանակներից[6]: Տնտեսության մասին ավանդական մտածելակերպը կոտրելու և մարդկանց համընդհանուր բարեկեցությունը սեփական շահերից գերադասելու տեսանկյունից՝ «Սոցիալական տնտեսությունը» ամբողջությամբ համապատասխանում է այս բարոյական համատեքստին: Այն ստեղծում է ուղիներ, որոնց շնորհիվ ձեռնարկատերերի նախաձեռնողականությունը, ստեղծարարությունը, շահույթը և ռիսկի գնալու վարքագիծը կարող են նպաստել մարդկանց և համայնքների ծաղկմանը[7]:

«Սոցիալական տնտեսության» ընկալման անհատական և համայնքային հարթությունների համատեղումը բավականին համահունչ է «Կաթողիկե սոցիալական ուսմունքի» սկզբունքներին: Սա կոնկրետ արտահայտություն է «փոխլրացումների», որոնք «Կաթողիկե սոցիալական ուսմունքի» կողմից միշտ փորձ է կատարվել խթանել անհատների և համայնքի միջև: Այն «անհատական իրավունքների պաշտպանության» և «համընդհանուր բարիքի խթանման» համադրությունն է[8]: «Կաթողիկե սոցիալական ուսմունքը» լուրջ մտահոգություն ունի տնտեսական ռեսուրսների բաշխվածության, անհավասարության, Աստծո ստեղծածին հասցված վնասի և ֆինանսական գերշահույթ ստանալու նպատակով մարդկանց չարաշահումների ենթարկելու առումով: Լայն առումով, «Սոցիալական տնտեսությունը» կիսում է միևնույն մտահոգություններն ու նպատակները հիմնաքարային նույն արժեքները պաշտպանելու համար[9]:

Ներդիր 1. Սոցիալական տնտեսությունը և Կաթողիկե սոցիալական ուսմունքը: 17-րդ «Բարեգործության օրերի աստվածաբանությունը» սիմպոզիումի թեման է

Իսպանիա

2017 թվականի ապրիլին «Կարիտաս Իսպանիա» կոնֆեդերացիան կազմակերպեց «Բացելով ճանապարհներ դեպի առավել ներառական և աջակցող տնտեսություն» խորագիրը կրող 17-րդ «Բարեգործության օրերի աստվածաբանությունը» սիմպոզիումը:

Միջոցառումը տեղի ունեցավ Սանտիագո դե Կոմպոստելայում և համախմբեց միջազգային մի շարք փորձագետների և աստվածաբանների՝ միասին քննարկելու ավելի մարդակենտրոն տնտեսություն ունենալու պարտավորությունը և դրա հարաբերակցությունը «Կաթողիկե սոցիալական ուսմունքին»: Կարիտաս Իսպանիան կազմակերպում է «Բարեգործության օրերի աստվածաբանությունը» սիմպոզիումը յուրաքանչյուր 4 տարին մեկ անգամ:

Ավելին տե՛ս.
https://www.caritas.es/producto/abriendo-caminos-una-economia-mas-solidaria-e-inclusiva/

Հետևյալ աղյուսակը միավորում է Կարիտասի սկզբունքները և «Սոցիալական տնտեսության» համապատասխան նպատակները:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԱՐԻՏԱՍԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Կարիտասի սկզբունքները	«Սոցիալական տնտեսության» ներդրումը
Համընդհանուր բարիք	«Սոցիալական տնտեսության» ներդրումըԱռաջնահերթությունը տալով սոցիալական նպատակներին՝ «Սոցիալական տնտեսությունը» նպաստում է հասարակության մեջ սոցիալական, տնտեսական և բնապահպանական խնդիրների լուծմանը՝ նորարարական ուղիներով:
Համերաշխություն և ներառականություն	«Սոցիալական տնտեսությունը» ներդրումներ է կատարում մարդկանց, նրանց կարողությունների և ստեղծագործականության զարգացման գործում՝ այսպիսով հզորացնելով նրանց և ուշադրությունը սևեռելով կարևորագույնի վրա:
Կայունություն	«Սոցիալական տնտեսությունը» դրականորեն է ազդում կայուն զարգացման երեք հիմնասյուների (սոցիալական, տնտեսական, շրջակա միջավայրի) վրա: Այն նաև նպաստում է երկարատև աջակցությանը և առավել կայուն ներառմանը:
Արժանապատվություն	«Սոցիալական տնտեսությունը» խթանում է արժանապատիվ աշխատանքային պայմանների ստեղծումը և աշխատավարձերի վճարումը, ինչպես նաև առաջարկում է հարմար լուծումներ իր աշխատակիցների համար: Այն նպաստում է անհատի կարողությունների և հմտությունների զարգացմանը՝ հաշվի առնելով նրա կարգավիճակը: Այս մոտեցումը մարդուն ուժ է տալիս շարժվելու անկախություն, ինքնակայունություն և ավելի բարձր ինքնագնահատական ձեռք բերելու ճանապարհով:
Փոխադարձություն	«Սոցիալական տնտեսությունը» ակտիվացնում է սիներգիաներ, որոնք փնտրում են լուծումներ կոլեկտիվ հետաքրքրություն ներկայացնող հարցերի համար: Սա հնարավորություն է տալիս դուրս գալ խնամք իրականացնելու հեռանկարի շրջանակներից այն կողմ, ակտիվացնելու փոխադարձության պրակտիկան և գեներացնելու ինչպես սոցիալական, այնպես էլ տնտեսական արժեքներ:
Անդրադառնալ ոչ միայն աղքատության ախտանիշներին, այլ նաև բուն պատճառներին	«Սոցիալական տնտեսությունը» ձգտում է ըմբռնել, ազդեցություն ունենալ և շահերի պաշտպանություն իրականացնել կառուցվածքային փոփոխությունների ոլորտում կամ վերացնել համակարգային խոչընդոտները, որոնք կանխարգելում են փոփոխությունը:
Սուբսիդիարություն և բազմակարծություն	«Սոցիալական տնտեսությունը» խթանում է երկխոսությունը տարբեր շահագրգիռ կողմերի միջև: Այն բարելավում է բնակիչների, համայնքի և հասարակության առավել լայն շերտերի միջև եղած փոխհարաբերությունները՝ միաժամանակ խթանելով կոլեկտիվ պատասխանատվությունը:

10

1.2. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕԳՈՒՏԸ ԿԱՐԻՏԱՍ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

«Սոցիալական տնտեսության» ձեռնարկություններն ավելի լավ հասարակություն ունենալու ուժային շարժիչներն են: Նրանք կարող են օգնել այնպիսի խնդիրների կրճատման հարցում, ինչպիսիք են աղքատությունը, սոցիալական բացառումը և բնապահպանական մարտահրավերները՝ աղտոտումը կամ թափոնների դասակարգումը, և այն, թե ինչպես սրանք կարող են նպաստել «Կայուն զարգացման նպատակների» իրականացմանը:

Իհարկե, նոր հիմնադրված ձեռնարկությունը չի կարող միանգամից համապատասխանել ՄԱԿ-ի կայուն զարգացման 17 նպատակներին: Այնուամենայնիվ, ֆինանսական կենսունակությունը պետք է լինի բոլոր ձեռնարկությունների համար ընդհանուր նպատակ: Մասնավոր բիզնեսը հաճախ դուրս է մնում սոցիալական կազմակերպությունների գործողությունների շրջանակից, ինչպես և սոցիալական օրակարգը կարող է լինել բիզնեսների գործունեության բնույթից դուրս: Սոցիալական տնտեսության ձեռնարկությունները կարող են ծավալել կոմերցիոն գործունեություն սոցիալական նպատակներով:

Ներդիր 2. Աջակցել շահառուների արժանապատվությանը և կարողությունների զարգացմանը. «Սոլիդար ավտո» ավտոտնակ

Ֆրանսիա

«Սոլիդար ավտո» ավտոտնակը պայքարում է սոցիալական մեկուսացման և գործազրկության դեմ՝ բարձրացնելով մարդկանց ճկունությունը սոցիալական և/կամ տնտեսական դժվարությունների դեմ: Ճկունությունը բանալի տարր է աղքատության մեջ գտնվող մարդկանց սոցիալական ներառումն իրականացնելու հարցում: Մեքենա ունենալը, հետևաբար, առաջին քայլն է դեպի ավելի շատ հնարավորություններ /աշխատանքի հնարավորություններ/ հատկապես գյուղական համայնքներում:

«Սոլիդար ավտո» ավտոտնակների ցանցը հասանելի է ֆինանսական դժվարություններ ունեցող մարդկանց համար կա՛մ իրենց մեքենաները վերանորոգելու, կա՛մ օգտագործված մեքենա գնելու նպատակով: Գնացուցակը սահմանվում է ըստ շահառուների եկամուտի: Ֆինանսական աջակցություն կարող է տրամադրվել այլ ծրագրերի և ֆինանսական հաստատությունների հետ գործընկերության շնորհիվ:

«Սոլիդար ավտոն» գոյություն ունի մեքենաների նվիրատվության շնորհիվ: Դժվարին պայմաններում հայտնված անձանց վաճառվող մեքենաները մասնագետների թիմի կողմից վերանորոգված, նվիրատրված մեքենաներ են: Ի պատասխան կրճատվում են նվիրատվություն իրականացնող անձանց կողմից վճարվող հարկերը: Այս մոդելը, որի հիմնաքարն է համերաշխությունը, խթանում է պատասխանատու սպառումը՝ երկրորդ կյանք հաղորդելով մեքենաներին:

«Սոլիդար ավտոն» ավանդական ավտոտնակների նման առաջարկում է վերանորոգման ծառայություններ բոլոր մեքենաների համար, բայց հավելյալ վճարով: Մարդիկ, որոնք որոշում են վերանորոգել իրենց մեքենաները «Սոլիդար ավտո»-ում, գիտեն, որ իրենք ներդրում են կատարում կարիքի մեջ գտնվող անձանց տեղափոխության հարցերը կարգավորելու գործում: Կարիտաս Ֆրանսիան մեծապես աջակցում է այսպիսի ավտոտնակների մոդելի տարածմանը:

Ավելին տե՛ս.
http://solidarauto.org/



ԱՋԱԿՑԵԼՈՎ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅԱՆԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ

Սոցիալական տնտեսության ձեռնարկությունները կարող են առաջարկել հավելյալ ներառական բաղադրիչ՝ հզորացնելով անհատական ուժեղ կողմերը և իրավասությունը, ցուցաբերելով մարտահրավերային և աջակցող մոտեցում. այսինքն՝ Սոցիալական տնտեսության ձեռնարկությունները կարիք ունեն հաջողությամբ մրցակցելու շուկայում գործող «սովորական» ընկերությունների հետ: Ուստի Սոցիալական տնտեսության ձեռնարկություններն ընձեռում են զգալի հնարավորություն հատկապես այն մարդկանց համար, որ ունեն աշխատանքային պատրաստվածության որոշակի մակարդակ և աշխատանքային շուկայում ներառվելու մեծ ներուժ: Մարտահրավերներով հարուստ և միևնույն ժամանակ աջակցող միջավայրում աշխատելը նրանց հնարավորություն է տալիս ձևավորելու նոր հմտություններ և ինքնավստահություն, մինչդեռ ձեռնարկությունն ինքնին շուկայում գտնվում է մրցակցության մեջ մյուս բիզնեսների նման:

ԳՈՐԾԱԶՈՒՐԿ ԱՆՁԱՆՑ ՆԵՐԳՐԱՎՈՒՄԸ ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱ

Սոցիալական տնտեսության ձեռնարկությունները առաջարկում են գործազուրկ անձանց վերապատրաստելու և աշխատանքի տեղավորելու նոր լրացուցիչ տարբերակ: Նրանք կարող են վերացնել աշխատանքային վերապատրաստման ավանդական ծրագրերի և կանոնավոր աշխատաշուկայի միջև եղած անջրպետը: Աշխատանքի և վերապատրաստումների հաստիքները Սոցիալական տնտեսության ձեռնարկություններում կարող են դիտարկվել որպես միջանկյալ քայլ այն մարդկանց համար, որ հաջողությամբ ավարտել են աշխատանքային վերապատրաստման ծրագրերը, բայց դեռ պայքարում են աշխատաշուկայում իրենց տեղը գտնելու համար: Նրանց համար Սոցիալական տնտեսության ձեռնարկությունները հնարավորություն են ստեղծում ձեռք բերելու գործնական աշխատանքային փորձ մի միջավայրում, որը շատ նման է սովորական աշխատաշուկային և, հետևաբար, արժանապատիվ աշխատանք գտնելու ավելի լավ հնարավորություններ:

Աշխատանքային ընթացքը Ֆրանսիայի «Սոլիդար ավտո» ավտոտնակներից մեկում



Իսպանիայի Ժիրոնա քաղաքում սոցիալական ինտեգրման համար հեծանիվների արտադրություն: Լուսանկարը՝ Անտոնիո Ֆանտազիայի

Ներդիր 3. Նոր դաշինքների ստեղծում և գործազուրկների ներգրավման խթանում: «Ֆորմաջիո և Տրեբոլ» հիմնադրամ և «Դինս» ռեստորանային դպրոց:

Իսպանիա

Ներկայումս նորաձևության, ֆինանսների, սննդի և վերականգնման ոլորտում գործող ավելի քան 1000 ընկերություններ համագործակցում են «Ֆորմաձիո և Տրեբոլ» հիմնադրամի հետ հնարավորություններ ընձեռելու համար մարդկանց՝ սոցիալական բացառման ռիսկից խուսափելու նպատակով: Ընկերությունները կարող են համագործակցել մի քանի ձևով, ինչպես, օրինակ՝ մարդկանց կամ ծառայությունների վարձակալումը, կրթաթոշակների տրամադրումը վերապատաստումների նպատակով, կամ ներգրավված լինելը կորպորատիվ կամավորական ծրագրերի մեջ: Ընկերությունների հետ գործընկերային հարաբերությունների հաստատումը նպաստում է «Ֆորմաջիո և Տրեբոլի» հիմնական նպատակին հասնելուն: Ուղեկցել, հզորացնել և ամրապնդել բոլոր շահառուների ինքնուրույնությունը՝ օգնելու համար նրանց աշխատանք գտնելու աշխատաշուկայում և ձեռք բերելու նոր հնարավորություններ: Աջակցություն ստանալով «Կարիտաս Դիոսեսանայի» կողմից (հիմնադրված Բարսելոնայում 1992 թվականին), համոզմամբ, որ աշխատանք ունենալը սոցիալական բացառման դեմ պայքարելու լավագույն միջոցն է, «Ֆորմաջիո և Տրեբոլը» խթանում է բարձր սոցիալական ազդեցություն ունեցող կայուն մոդելներին, որոնք ունեն եկամտաբերություն, տնտեսական և բնապահպանական տեսլական:

Աշխատանքի տեղավորման բազմաթիվ սոցիալական տնտեսության ձեռնարկություններ հիմնադրամի մաս են կազմում կամ կապված են նրա հետ, օրինակ՝ «Դինս» ռեստորանի դպրոցը: Այս ձեռնարկությունը հիմնադրվել է 2013 թվականի վերջում, «ÁREAS» (առաջատար ռեստորանային ընկերություն) ընկերության աջակցությամբ, որպես ռեստորանի և դպրոցի համադրություն, որտեղ գործազուրկ մարդիկ կարող են վերապատրաստվել և աշխատանքային փորձ ձեռք բերել: Ժամանակի ընթացքում «Դինս»-ը ամրապնդել է իր ռեստորանային տարածքը ինչպես նաև իր սննդի մատուցման ծառայությունները Diagonal-Besòs տարածքում:

2016 թվականից «Դինս»-ը նաև տարածք ունի Կատալոնիայի պոլիտեխնիկական համալսարանում՝ «Դինս Կամպուս» անվանմամբ, որը ներառում է արագ և որակյալ խոհանոցով մասնագիտացված սրճարան:

Հավելյալ տեղեկատվություն այստեղ՝ **https://www.formacioitreball.org/**, **http://dinsescola.org/**, իսկ տեսանյութերը նկարահանված «Կարիտաս Եվրոպա»-ի կողմից այստեղ՝ **https://bit.ly/2pzDTn7** և այստեղ՝ **https://bit.ly/2I9CL2i**

Տես նաև Ներդիր 14-ը՝ սոցիալական ներդրման եկամտաբերության վերաբերյալ:

Երկխոսության խթանում, լրացուցիչ աջակցության ակտիվացում և նոր դաշինքների ստեղծում

Ներկայիս սոցիալական մարտահրավերները Կարիտասին դրդում են վերանայելու իր ունեցած դերը հասարակության մեջ, ընտրելու փոխհամագործակցային մոտեցում և ստեղծելու դաշինքներ տարբեր՝ հանրային և մասնավոր շահագրգիռ կողմերի հետ: Սոցիալական տնտեսության ձեռնարկությունները կարող են բացահայտել երկխոսության և փոխհամագործակցության նոր հնարավորություններ այլ բիզնեսների, տեղական համայնքների և հենց շահառուների հետ: Այս դաշինքները հանգեցնում են շահառուների և տեղական համայնքների հզորացմանը. վերջիններս դառնում են փոփոխության համահեղինակներ և գործակալներ և կարող են ընդլայնել հասանելի ռեսուրսների մասշտաբը՝ ավելացնելով սոցիալական և տնտեսական հնարավորությունները մարդկանց համար:

Որպես օրինակ-մոդելի ճանաչում այլ բիզնեսների և ՔՀԿ-ների համար

Տրամադրելով հաջողված օրինակներ, որոնք միավորում են բարձր սոցիալական ազդեցությունը ֆինանսական կայունության հետ՝ Սոցիալական տնտեսության ձեռնարկությունները կարելի է դիտարկել որպես առաջնեկներ բիզնեսը նոր՝ մարդակենտրոն մոտեցմամբ վարելու հարցում: Նրանք ծառայում են որպես փորձի հաջողված մոդելներ, որոնք կարող են ոգեշնչել մեծ ընկերություններին, ինչպես նաև սկսնակ գործարարներին՝ սկսելու իրենց սեփական ՍՏՁ-ները կամ զարգացնելու գործող ընկերություններն ավելի մարդակենտրոն ճանապարհով:

Լրացուցիչ հեղինակություն՝ շահերի պաշտպանության նպատակով

Մեր սեփական ՍՏՁ-ները աշխատեցնելը նաև կբարելավի Կարիտասի կողմից իրականացվող շահերի պաշտպանության գործընթացը՝ ավելի մարդակետրոն տնտեսություն ունենալու տեսանկյունից: Կարիտասին պատկանող և նրա կողմից ղեկավարվող ՍՏՁ-ները մեզ ապահովում են առաջին ձեռքի փորձով, թե ինչ է նշանակում ստեղծել և վարել բիզնես, որը հաջողված է և՛ ֆինանսական, և՛ տնտեսական տեսանկյունից: Գործողությունների սեփական նախաձեռնությամբ ձեռնարկումը մեզ թույլ է տալիս խորը պատկերացում կազմել ՍՏՁ-ները վարելու գործնական մարտահրավերների մասին և բարձրացնում է մեր հեղինակությունը Սոցիալական տնտեսության անհրաժեշտության մասին հանրային բանավեճում:

Ինքնավարության բարձրացում

Գոյություն ունեցող սոցիալական ծառայությունների և նախագծերի մեծամասնությունը գոնե մասամբ ֆինանսավորվում է կա՛մ հանրային, կա՛մ մասնավոր հովանավորների կողմից /ինչպես, օրինակ՝ հիմնադրամները/: Այս պարագայում Կարիտաս կազմակերպությունները հաճախ ունեն սահմանափակումներ ինքնուրույն ծրագրեր մշակելու հարցում: Ֆինանսավորող հաստատությունները հաճախ ազդում են սոցիալական նախագծերի մշակման և աշխատանքի վրա՝ առանձնահատուկ ուղեցույցներ և գնահատման ցուցիչներ սահմանելով: Սա շուկայում ծառայություններ մատուցելով կամ ապրանքներ վաճառելով ֆինանսական միջոցներ վաստակելու դեպքը չէ: Այս առումով Սոցիալական տնտեսության ձեռնարկությունը կարող է առաջարկել մեծ ինքնավարություն նախագծի մշակման և գործարկման հարցում:

Ներդիր 4. Խթանելով երկխոսությունը, ակտիվացնելով հավելյալ աջակցությունը և ստեղծելով նոր դաշինքներ. Բջջային հեռախոսների վերամշակում /Մագդայի վերամշակում/

Ավստրիա

«Մագդայի վերամշակումը» սոցիալական ձեռնարկություն է, որը հավաքագրում, տեսակավորում և վերամշակում է օգտագործված բջջային հեռախոսները: Այն Կարիտաս Վիեննային պատկանող «Մագդա գրուպ» անունը կրող սոցիալական ձեռնարկության մասն է կազմում: Մեդիայի և լոգիստիկայի դաշտում ունեցած ուժեղ գործընկերների հետ Կարիտասը ամեն տարի հավաքում է շուրջ 400000 օգտագործված բջջային հեռախոս, փորձարկում է դրանցից յուրաքանչյուրը և վաճառում այնքան, ինչքան հնարավոր է: «Մագդայի վերամշակումը» առաջարկում է ցածր որակավորում պահանջող աշխատատեղեր 8 աշխատողի: Ապացուցված է, որ այս աշխատատեղերն անչափ կարևոր լրացում են Կարիտասում գործող երկարաժամկետ գործազուրկների համար նախատեսված թրեյնինգային նախագծերի համար: Կարիտասի կողմից կազմակերպված մասնագիտական վերապատրաստումներին մասնակցած անձինք, այնուամենայնիվ, դժվարությունների են հանդիպում աշխատաշուկայում պատշաճ աշխատանք գտնելու հարցում: Այս մարդկանց «Մագդայի վերամշակումը» ստեղծում է միջանկյալ քայլ կատարելու հնարավորություն: Նրանք ստանում են ժամանակավոր աշխատանք, որն ավելի պահանջված է և մարտահրավերներով լի, քան վերապատրաստման դասընթացները, բայց ավելի դյուրին է, քան աշխատաշուկայում առկա աշխատանքները: Սա աշխատողներին հնարավորություն է ընձեռում, որ ձեռք բերեն պրակտիկ հմտություններ, բարձրացնեն ինքնագնահատականը և միևնույն ժամանակ մեծացնեն այլ աշխատանք գտնելու շանսը:

Ավելին տե՛ս.
https://www.magdas.at/

Ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներ

«Սոցիալական տնտեսության» շրջանակներում սոցիալական ծրագիր իրականացնելը նույնպես ստեղծում է ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներ ներգրավելու հնարավորություն: Ծուկայում ապրանքներ վաճառելով կամ ծառայություններ մատուցելով՝ սոցիալական տնտեսության ձեռնարկությունները ստանում են լրացուցիչ եկամուտներ. սա կարող է դիտարկվել կա՛մ որպես այլընտրանքային, կա՛մ որպես հավելյալ աջակցություն ֆինանսավորման ավանդական ռեսուրսներին, ինչպիսիք են, օրինակ՝ դրամաշնորհները, պետական ֆինանսավորումը, հովանավորչությունը կամ նվիրատվությունը: Այն առաջարկում է լրացուցիչ ֆինանսավորման աղբյուրներ և օգնում է կրճատելու գոյություն ունեցող կախվածությունները:

Այնուամենայնիվ, պարտադիր է ընդգծել, որ շատ դեպքերում շուկայական եկամուտներն արագ չեն ստացվում այստեղ, ինչպես մյուս բիզնեսների դեպքում, կա թաքնված ռիսկ: Բացի այդ՝ նախնական ներդրումներ կարող են պահանջվել ստարտափային փուլում՝ նախքան բիզնեսի աճը: Սովորաբար, սրա համար որոշակի ժամանակ է պահանջվում մինչև զգալի շուկայական եկամտի ստացվելը: Ուստի, սոցիալական տնտեսության ձեռնարկություններն առաջարկում են լրացուցիչ ֆինանսական ռեսուրսներ, բայց դրանք կախված են նաև առաջնային ներդրումներից, լավ բիզնես պլանից, ինչպես նաև համբերատարությունից և ռիսկի դիմելու պատրաստակամությունից:

Ներդիր 5. Խթանելով երկխոսությունը, ակտիվացնելով հավելյալ աջակցությունը և ստեղծելով նոր դաշինքներ /ԷԿՈ ՀԱԲԻՏԱՏ/

Ֆրանսիա

«Էկո Հաբիտատ» ցանցը հիմնվել է 2015 թվականին այն փաստի վրա, որ շատ ընտանիքներ, ապրելով էներգետիկ աղքատության պայմաններում[10], ի վիճակի չէին իրականացնելու վերանորոգման աշխատանքներ իրենց տների ջերմամեկուսացման համար, որը հնարավորություն կտար նրանց կրճատելու էներգիայի վրա ծախսվող ֆինանսական միջոցները:

«Էկո Հաբիտատը» օգնում է այս մարդկանց նախագծելու և իրականացնելու իրենց կենսամիջավայրը բարելավելու ծրագիր՝ հենվելով կամավորների ցանցի, արհեստագործական ձեռնարկությունների, համայնքների և ֆինանսական գործընկերների ներուժի վրա՝ օգտագործելով էկոնյութեր: Ցանցը սերտորեն համագործակցում է Էներգետիկայի և շրջակա միջավայրի ազգային գործակալության հետ և հանդես է գալիս որպես ֆասիլիտատոր՝ միացնելով կենսամիջավայրի բարելավման գործընթացում ներգրավված բոլոր դերակատարներին /օպերատորներ, ՏԻՄ ներկայացուցիչներ, ֆինանսական գործընկերներ, հաստատություններ, ասոցիացիաներ, շինարարական ընկերություններ/ համագործակցելու կոնկրետ, հարմարեցված ծրագրերի շուրջ:

Ուստի, ցանցը նպաստում է երեք հիմնական գործողություններ.

- **Սոցիալական գործունեություն**. կարիքի մեջ գտնվող մարդկանց պայմանների բարելավում պետական ֆոնդերի կողմից չֆինանսավորվող ծախսերը փակելու համար այլընտրանքային ֆինանսական լուծումներ գտնելու միջոցով:
- **Տնտեսական գործունեություն**. բացի կարիքի մեջ գտնվող անձանց տրամադրվող տնտեսական աջակցությունից՝ գործունեության այս տեսակը ազդեցություն ունի նաև աջակցելու տարածաշրջանում գործունեություն ծավալող շինարարական ընկերություններին, ինչպես նաև բոլոր այն ընկերություններին, որ առնչվում են բնակարանի ջերմամեկուսացմանը:
- **Էկոլոգիական գործունեություն**. խթանել շրջակա միջավայրի համար անվնաս նյութերի օգտագործումը՝ այս կերպ խթանելով կայուն զարգացումը:

Ավելին տե՛ս.
https://www.reseau-ecohabitat.fr/

Ներդիր 6. Ֆինանսավորման լրացուցիչ միջոցներ. «Էլիո» սոցիալական լվացքատներ

Սերբիա

Սերբիայի Սաբաք քաղաքի համայնքապետարանում Կարիտասը մատուցում է մի քանի տեսակի սոցիալական ծառայություններ, ինչպես, օրինակ՝ տնային խնամք, մտավոր, հոգեկան խնդիրներ ունեցող, ինչպես նաև սովորելու դժվարություններ ունեցող անձանց ցերեկային խնամք:

Կարիտասի կողմից ֆինանսավորվող «Էլիո» սոցիալական լվացքատունը սեփական կայունությունը ապահովող սոցիալական տնտեսության ձեռնարկություն է, որը ֆոնդեր է ստեղծում թիրախ սոցիալական ծառայությունների ֆոնդերում կրկին ներդրվելու:

«Էլիոն» աշխատանք գտնելու հնարավորություն է ընձեռում մարգինալացված խմբերի կանանց: Ծառայություններն անվճար են նաև խոցելի անձանց, մանավանդ Կարիտաս Սաբաքի տնային խնամքի ծառայության շահառուների համար:
«Էլիո» լվացքատունը ոչ միայն աշխատանքի հնարավորություն է ստեղծում մարգինալացված խմբերի կանանց համար, այլ նաև ֆինանսական աջակցություն է տրամադրում տարածաշրջանում Կարիտասի կողմից իրականացվող այլ սոցիալական ծառայություններին: Սոցիալական բաղադրիչից բացի՝ ծառայությունները, որոնք առաջարկում է այս լվացքատունը, անվտանգ են շրջակա միջավայրի համար:

Ավելին տե՛ս.
https://bit.ly/2xAO13r

1.3. ԻՆՉՊԵՍ Է ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՆՊԱՍՏՈՒՄ ԱՎԵԼԻ ԿԱՅՈՒՆ ԵՎ ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆԱԼՈՒՆ

1.3.1 Սոցիալական տնտեսությունը և Կարիտասի սոցիալական մոդելը

Կարիտաս Եվրոպայի կողմից կատարվել է եվրոպական սոցիալական մոդելների լայնամասշտաբ վերլուծություն շարունակաբար աճող անհավասարությունների և աղքատության համատեքստում՝ ընդգծելով, որ դիմակայուն սոցիալական համակարգերն անհրաժեշտ է, որ կանխեն կամ նվազեցնեն աղքատության սերնդեսերունդ փոխանցվելու համառ միտումը:

Որպես լուծում՝ մենք բացահայտել ենք «Կարիտասի սոցիալական մոդելը», որն առաջարկում է այս մարտահրավերները հաղթահարելու ռազմավարություններ: Ընտանիքը, ներառական աշխատաշուկան և սոցիալական պաշտպանությունը արդար և դիմակայուն եվրոպական սոցիալական մոդելների երեք հիմնասյուներն են՝ ուղղված անհավասարության, աղքատության և սոցիալական բացառման վերացմանը[11]:

Կարիտասի սոցիալական մոդելը իրականացնելիս հստակ դերակատարում ունի սոցիալական տնտեսությունը.

- Այն խթանում է ընտանեկան կյանքի իրավունքը՝ ֆասիլիտացնելով աշխատանք-կյանք բալանսավորված մոտեցումները, ինչպես նաև աջակցելով և ճանաչելով ընտանիքի նկատմամբ տածած խնամքի արժեքը:
- Այն խթանում է ներառական աշխատաշուկաների ստեղծումը, քանի որ դրանք աշխատանքով են ապահովում ամենախոցելի խմբերի մարդկանց՝ տրամադրելով վերապատրաստման հնարավորություններ հենց աշխատանքի ժամանակ:
- Այն խթանում է աշխատակիցների իրավունքների պաշտպանությունը, ապահովում խելամիտ աշխատավարձ, հասանելիություն սոցիալական բարիքներին և աշխատակիցների մասնակցային ներառում:
- Այն նպաստում է սոցիալական պաշտպանության երաշխավորմանը՝ ապահովելով հարմար և հասանելի որակյալ ծառայություններ:

Ներդիր 7. Սոցիալական տնտեսությունը և աշխատանք-կյանք բալանսը: «Մագդաս» մաքրման ծառայություն

Ավստրիա

2017 թվականին Կարիտաս Վիեննայի կողմից հիմնադրվեց «Մագդասի ծառայությունները»՝ սոցիալական տնտեսության բիզնես, որն առաջարկում է օբյեկտների կառավարման և գրասենյակային տարածքների մաքրման ծառայություններ: 2018 թվականի կեսերին արդեն 80 աշխատակիցներ աշխատում էին «Մագդասի ծառայությունների» համար ավելի քան 30 շենքերում: «Մագդասի ծառայությունների» սոցիալական ազդեցությունը տարածվում էր աշխատաշուկայում սահմանափակ հնարավորություններ ունեցող անձանց աշխատանք առաջարկելու սահմաններից այն կողմ: «Մագդասի ծառայությունները» առաջարկում են ընտանիքի համար բարենպաստ պայմաններ և աշխատանքային ժամեր: Սովորաբար Վիեննայում մաքրման ծառայությունների աշխատանքը սկսվում է առավոտյան շատ վաղ կամ կեսօրից հետո՝ բավականին դժվար դարձնելով ընտանեկան կյանքի և աշխատանքի համատեղելիությունը: Բացի այդ, «Մագդասի ծառայությունները» առաջարկում են աշխատակիցներին անվճար խորհրդատվություն, որպեսզի նրանք հաղթահարեն իրենց առջև ծառացած մարտահրավերները:

Սոցիալական խորհրդատուները նաև աջակցում են աշխատանքի մեջ ինտեգրման հարցերում, ինչպես օրինակ՝ լեզվական հմտությունների բարելավում, թիմակառուցողականություն և ինքնազբաղվածություն: Աշխատանք տրամադրելիս «Մագդասի ծառայությունները» շեշտը դնում են երկար ժամանակ աշխատանք չունեցող մարդկանց՝ փախստականներ, միգրանտներ և հաշմանդամություն ունեցող անձինք, ներգրավելու վրա:

Ավելին տե՛ս.
www.magdas.at/en/ magdas-services/

Աշխատանքային ժամանակի և ընտանեկան կյանքի համադրություն
Վիեննայի «Մագդասի ծառայություններ»-ում, Ավստրիա; Լուսանկարը՝ Ալեքսանդրա Պավլոֆի

1.3.2. Սոցիալական տնտեսությունը և օրակարգ 2030-ը

Կայուն զարգացման օրակարգ 2030-ը և կայուն զարգացման նպատակները[12] ներկայացնում են թարմացված գլոբալ պարտավորություն վերջ տալու ոչ միայն աղքատությանը և սովին, այլ նաև ձեռք բերելու համընդհանուր սոցիալական պաշտպանություն, անհավասարությունների կրճատում և բնապահպանական կայունություն:

Այս նպատակներին հասնելու համար պահանջվում են հիմնարար փոփոխություններ տնտեսական գործունեության ոլորտում: Օրակարգ 2030-ը հաստատում է ամբողջական մոտեցման կարիքը, ինչպես նաև այլընտրանքային տնտեսական մոդելների և զարգացման ռազմավարությունների կարևորությունը՝ խթանելու կայունությունը և ներառականությունը:

Օրակարգ 2030-ը նաև ընդգծում է այս երեք հարթություններում՝ տնտեսական, սոցիալական և բնապահպանական[13], կայուն զարգացումը բալանսավորված և ինտեգրված եղանակով նվաճելու կարիքը: Այս բալանսավորված մոտեցումը սոցիալական տնտեսության զարկերակն է: Այն կարող է վճռորոշ դեր ունենալ Օրակարգ 2030-ի կայուն զարգացման նպատակների կատարման մեջ՝ խթանելով կայուն զարգացումը կոնկրետ սոցիալական, ինստիտուցիոնալ և տեխնոլոգիական նորարարություններով: Սոցիալական տնտեսության ձեռնարկությունները նաև օգնում են ճանաչելու Օրակարգ 2030-ի համընդհանուր տրանսֆորմացիոն տեսլականը, ըստ որի՝ սոցիալական տնտեսության ձեռնարկությունների ներգրավվմամբ քարոզչությունն ու քաղաքական երկխոսությունը կարևոր են քաղաքականության հետևողականությունը ապահովելու համար: Սոցիալական տնտեսության և կայուն զարգացման նպատակների միջև կապն ընդգծված է «Սոցիալական և համերաշխության տնտեսության» մասին ՄԱԿ-ի աշխատանքային խմբի կողմից հրատարակված հետևյալ աղյուսակի մեջ[14]: Այն մեր ուշադրությունն է հրավիրում իր ներուժի վրա՝ որպես զարգացման այլընտրանքային մոդելի և անդրադառնում է մասնատված և ոչ կայուն զարգացման կառուցվածքային պատճառներին[15]:

Սոցիալական տնտեսությունը և կայուն զարգացման նպատակները

ԿԶՆ	Թիրախներ	Հիմնավորում
Աղքատություն, ոչնչացում, հավասարություն և լավ կառավարում		
ԿԶՆ 1 Զրո աղքատություն **ԿԶՆ 10** Անհավասարության կրճատում **ԿԶՆ 16** Խաղաղություն, արդարություն և ուժեղ կառույցներ	1.2; 1.4 10.1; 10.2 16.6; 16.7	Սոցիալական տնտեսության ձեռնարկություններն ընդգծում են սոցիալական պաշտպանությունը, բազային կարիքների ապահովումը և մասնակցային կառավարումը: Ավելի կոնկրետ, ՍՏՁ-ները կարող են նպաստել այս նպատակների նվաճմանը, որին կարելի է հասնել արդար աշխատանքի, տնտեսական ռեսուրսների նկատմամբ իրավունքների ուժեղացման, սոցիալական ծառայությունների և աջակցության հասանելիության ֆասիլիտացման, սննդի անվտանգության և կանանց տնտեսական հզորացման միջոցով:
Սով, սնունդ և գյուղատնտեսություն		
ԿԶՆ 2 Զրո սով	2.3; 2.4; 2.5	Շատ ՍՏՁ-ների գործունեությունը կենտրոնացած է գյուղատնտեսության և սննդի մատակարարման վրա կոոպերատիվներում, քաղաքային համայնքային գյուղատնտեսության, արդար առևտրի և սննդի այլընտրանքային ցանցերի շրջանակներում ներգրավված արտադրողներով:
Սոցիալական ծառայություններ և աջակցություն		
ԿԶՆ 3 Առողջություն և բարեկեցություն **ԿԶՆ 4** Որակյալ կրթություն	3.3; 3.7; 3.8; 3.c 4.1; 4.2; 4.4; 4.5; 4.6; 4.7	Շատ ՍՏՁ-ներ մատուցում են սոցիալական ծառայություններ և տրամադրում են աջակցություն, ինչպես, օրինակ՝ առողջապահական, ծերերի, երեխաների և հաշմանդամ ունեցող անձանց խնամքի: Կրթությունը և դասընթացները սոցիալական տնտեսության ձեռնարկությունների մյուս կարևորագույն դաշտն են:
Գենդերային հավասարություն		
ԿԶՆ 5 Գենդերային հավասարություն	5.4; 5.5; 5.a	ՍՏՁ-ներում ակտիվ մասնակցությունը կարևոր հետևանքներ ունի հասարակական և կենցաղային ոլորտներում կանանց էմանսիպացիայի ու պահանջատիրության տեսանկյունից:

ԿԶՆ	Թիրախներ	Հիմնավորում
Զբաղվածություն, ենթակառուցվածք և ներառականության աճ		
ԿՀԶ 8 Արժանապատիվ աշխատանք և տնտեսական աճ	8.3; 8.4; 8.5; 8.9; 8.10	Թիվը կառավարությունների, որոնք ընդունում են ՍՏԶ-ների կարևոր դերը աշխատատեղեր ստեղծելու գործում գլոբալ ֆինանսական ճգնաժամի հետևանքները վերացնելու համատեքստում, շարունակաբար աճում է: ՍՏԶ-ները նույնպես նպաստում են անկայուն աշխատանքի աճի և ավանդական ֆորմալ սեկտորի անկարողությանը, որը չի կարողանում կատարել իր դերերը՝ ինչպիսին է գյուղական տարածքներից ավելորդ աշխատուժի կլանումը:
Կյանքի որակը մարդկային բնակավայրերում		
ԿՀԶ 11 Կայուն քաղաքներ և համայնքներ **ԿՀԶ 6** Ապահովել ջրի և սանիտարական պայմանների հասանելիությունը և կայուն կառավարումը բոլորի համար	11.1; 11.12; 11.3; 11.4; 11.6; 11.ա 6.1; 6.2; 6.3; 6.բ	Բնակավայրերում կյանքի որակը կբարելավվի՝ ՍՏԶ-ների հետ ասոցիացվող քաղաքացիական ակտիվացմամբ պայմանավորված: Սա բանալի է խթանելու մասնակցային կառավարման համակարգերը և չափազանց կարևոր է նորարարական ու ներառական զարգացում ապահովելու համար մեգապոլիսային կենտրոններում, գյուղական բնակավայրերում և փոքր քաղաքներում:
Անտառներ, օվկիանոսներ և ափամերձ էկոհամակարգեր		
ԿԶՆ 15 Կյանքը ցամաքի վրա **ԿԶՆ 14** Ջրային կյանք	15.1; 15.2; 15.3; 15.5 14.2; 14.4; 14.բ	ՍՏԶ-ները ոչ միայն ներառում են կազմակերպման ձևեր կամ կոլեկտիվ որոշումների կայացման գործընթացներ, որոնք հանգեցնում են անտառների, օվկիանոսների և ափամերձ էկոհամակարգերի պաշտպանությանը, այլ նաև կայուն ֆերմերագործության և բնական ռեսուրսների ղեկավարման խթանմանը:
Կայուն արտադրություն և սպառում, կլիմայի փոփոխություն		
ԿԶՆ 7 Մատչելի և մաքուր էներգիա **ԿԶՆ 12** Պատասխանատու արտադրություն և սպառում **ԿԶՆ 13** Կլիմայական գործընթաց	7.2; 7.a 12.2; 12.3; 12.5; 12.6; 12.8 13.1; 13.3	Սոցիալական տնտեսությունը օգնում է պայքարելու կլիմայի փոփոխության դեմ՝ մասնավորապես հասցեագրելով շրջանաձև տնտեսությունը/վերամշակում և կրկին օգտագործում, թափոնների կրճատում և հետբերքահավաքային կորուստներ:

Սոցիալական տնտեսության ձեռնարկությունների մեջ ներդրում կատարելն օգնում է Կարիտասին ունենալու աջակցող դեր Օրակարգ 2030-ի և դրա տրանսֆորմատիվ սկզբունքների համար.

- **Չթողնելով ոչ մեկին հետևում**. Օգնություն ցուցաբերել մարդկանց և առաջինը ամենադժվար իրավիճակներում հայտնված խմբերին: Սա այն հիմնարար սկզբունքն է, որն ընկած է Կարիտասի գործունեության հիմքում: Մենք կենտրոնացնում ենք մեր ջանքերը ամենաքիչ ուշադրության արժանացած և ամենախոցելի մարդկանց ուղղությամբ, և սա մեր առաքելության հիմքն է: Այս պոտենցիալը սոցիալական տնտեսության ձեռնարկությունների զարգացման մեջ կիրառելը կարող է վիթխարի արդյունքներ տալ շնորհիվ Կարիտասի՝ համայնքներում արմատացածության և մեր գործունեության լուսաբանման:

- **Մասնակցություն և երկխոսություն**. Հաշվի առնելով մեր արմատացածությունը՝ մենք բավականին լավ դիրքում ենք խթանելու համայնքների իմաստային ներգրավումը ՍՏՁ-ների զարգացման գործընթացում՝ այսպիսով նպաստելով կայուն զարգացման նպատակների կյանքի կոչմանը:

- **Ունիվերսալություն**. Կարիտասի մանդատն ունիվերսալ է և սոցիալական տնտեսության ձեռնարկությունների զարգացումը կարող է նույնպես համարվել ունիվերսալ մոտեցում: Կարիտասի ազգային ներկայացուցչություններից շատերն աշխատում են տարբեր խնդիրների լուծման ուղղությամբ՝ օգնություն ցուցաբերելով ամենախոցելի և տարանջատված մարդկանց, որտեղ առկա են աղքատություն ու բացառում, լինի Մադրիդի արվարձաններում, թե Նաիրոբիի ծայրամասերում:

- **Մարդու իրավունքներ**. Մարդու արժանապատվությունը մեր աշխատանքի կենտրոնում է, ինչպես և մարդու իրավունքների օրակարգում: ՍՏՁ-ն կարող է նպաստել տարրական սոցիալական իրավունքների պահպանմանը համայնքներում, ինչպիսին է, օրինակ՝ կրթությունը կամ առողջությունը[16]:

1.3.3. Սոցիալական տնտեսությունը և Սոցիալական իրավունքների եվրոպական հիմնասյունը

Սոցիալական իրավունքների եվրոպական հիմնասյունը[17] եվրոպական քաղաքական պարտավորություն է և առաջնորդում է անդամ պետություններին և ԵՄ կառույցներին: Այն նպատակաուղղված է սոցիալական օրենսդրության ամրապնդմանը և եվրոպացիների համար ավելի արդյունավետ իրավունքների գեներացմանը: Հիմնասյան խնդիրն է նպաստել սոցիալական առաջընթացին՝ աջակցելով արդար շուկաների և բարեկեցությունը ապահովող համակարգերի ներդրմանը: Այն ունի շուրջ 20 բանալի սկզբունքներ, որոնք դասակարգված են երեք կատեգորիաների շուրջ.

- Հավասար հնարավորություններ և հասանելիություն աշխատաշուկային՝ ներառյալ կրթությանը, հմտություններին և ցկյանս ուսումնառությանը, կանանց և տղամարդկանց համար հավասար վերաբերմունքին և հնարավորություններին, ապրանքների և ծառայությունների հասանելիությանը, աղքատությանը և շարժողականությանը, կենսապայմաններին և երիտասարդությանը առնչվող արդարության ասպեկտներին:

- Դինամիկ աշխատաշուկաներ և արդար աշխատանքային պայմաններ՝ ներառյալ աշխատուժի կառուցվածքը, աշխատաշուկայի դինամիկան և եկամուտը:

- Հանրային աջակցություն /սոցիալական պաշտպանություն և ներառականություն՝ ներառյալ արդար արդյունքները ծառայություններ մատուցելիս և սոցիալական անվտանգության ցանցերը:

Սոցիալական իրավունքների եվրոպական հենասյունը քաղաքացիների համար կյանքի կոչելը համընդհանուր պատասխանատվություն է: Քանզի հենասյանը աջակցող հիմնական գործիքները գտնվում են Եվրամիությանը անդամ երկրների ձեռքերում, ինչպես նաև սոցիալական գործընկերների և քաղաքացիական հասարակության, ուստի Եվրամիության կառույցները կարող են օգնել սահմանելու շրջանակներ և որոշակիացնելու ուղղությունները:

Սոցիալական տնտեսության ձեռնարկությունները, մասնավորապես՝ նրանք, ովքեր կենտրոնացած են աշխատաշուկայի պահանջներից դուրս մնացած անձանց համար աշխատանքի հնարավորությունների ստեղծման վրա, ամբողջապես նպաստում են Սոցիալական իրավունքների եվրոպական հենասյան իրականացմանը: Նրանք աջակցում են մի շարք սկզբունքների, որոնք թվարկված են ներքևի աղյուսակում:

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս սոցիալական տնտեսության առանցքային դերը Սոցիալական իրավունքների եվրոպական հենասյան իրականացման գործում[18]:

«Կարիտասն աջակցում է հազարավոր մարդկանց աղքատությունից և մեկուսացումից դուրս գալու իրենց ուղին գտնելու հարցում Եվրոպական աշխարհամասում հարյուրից ավել սոցիալական տնտեսության նախաձեռնություններ իրականացնելու միջոցով»:

Կարիտաս Եվրոպա, 2017

Սոցիալական տնտեսությունը և Սոցիալական իրավունքների եվրոպական հիմնասյունը

Սկզբունքը	Հիմնավորումը
Հավասար հնարավորություններ և հասանելիություն աշխատաշուկային	
1. Կրթություն, դասընթաց և ցկյանս ուսումնառություն	Սոցիալական տնտեսությունն առաջարկում է որակավորումներ և աշխատավայրում իրականացվող վերապատրաստումներ կյանքի անբարենպաստ պայմաններում հայտնված մարդկանց և խթանում է ցկյանս ուսումնառությունը:
2. Հավասարություն կանանց և տղամարդկանց միջև	Կանանց և տղամարդկանց միջև հավասարության խթանումը սոցիալական տնտեսության ոլորտի համար մնում է առաջնահերթություն:
3. Հավասար հնարավորություններ	Դժվարին իրավիճակում հայտնված և մեկուսացված անձանց աշխատանքով ապահովելով՝ Սոցիալական տնտեսությունը խթանում է անհավասարությունների կրճատումը: Սոցիալական տնտեսության նպատակն է՝ ներգրավել և ինտեգրել մարդկանց, որոնք տառապում են սոցիալական և մասնագիտական մի շարք խնդիրներից՝ աջակցելով խիստ անբարենպաստ պայմաններում հայտնվածներին մուտք գործելու աշխատաշուկա:
4. Ակտիվ աջակցություն աշխատանքին	Սոցիալական տնտեսության ձեռնարկությունները առաջարկում են աշխատանքի հնարավորություններ հզոր տնտեսական գործունեության և աշխատանքին զուգահեռ կազմակերպվող դասընթացների միջոցով և նպաստում կայուն տնտեսական և սոցիալական զարգացմանը այն տարածքներում, որտեղ նրանք գործում են: Հարմարեցված ուղիներ են մշակվում սոցիալական տնտեսության ձեռնարկությունների աշխատակիցների համար՝ աջակցելով և հզորացնելով նրանց ձեռնարկության շրջանակներում աշխատանքով ապահովելու կամ որակավորման միջոցով:
Աշխատանքային արդար պայմաններ	
5. Անվտանգ և հարմարեցված աշխատանք	Սոցիալական տնտեսությունն ապահովում է հարմարեցված լուծումներ աշխատողների համար՝ բարելավելով նրանց հմտություններն ու կարողությունները, միևնույն ժամանակ հաշվի առնելով նրանց անձնական իրավիճակը: Աջակցության տարբեր լուծումներ կարող են ձևավորվել, ինչպիսիք են, օրինակ՝ որակավորումը, աշխատանքի ժամանակ կազմակերպվող դասընթացները, հարմարեցված աշխատանքային գրաֆիկը և այլն:

Սկզբունքը	Հիմնավորումը
Աշխատանքային արդար պայմաններ (շարունակ.)	
6. Աշխատավարձեր	Սոցիալական տնտեսությունը պայքարում է աշխատատեղերի սեփականության դեմ և առաջարկում է արժանապատիվ աշխատավարձ: Աշխատանքը, ուստի և աշխատավարձը, հնարավորություն են ընձեռում ամենաանբարենպաստ պայմաններում հայտնվածներին՝ վերադառնալու բնականոն կենսապայմաններին և օրվա կառուցվածքին:
7. Սոցիալական երկխոսություն և աշխատողների ներառում	Սոցիալական տնտեսության շատ ձեռնարկություններ իրականացնում են մասնակցային կառավարում, որը ներառում է աշխատողների ուժեղ ներգրավում որոշումների կայացման գործընթացում:
8. Աշխատանք-կյանք ներդաշնակություն	Մարդկանց առանցքային դեր վերապահելով՝ սոցիալական տնտեսության ձեռնարկությունները փորձում են իրենց գործարկումը հարմարեցնել աշխատողների բարեկեցությանը: Աշխատանքային ճկուն հնարավորությունները կամ ձեռնարկությունների շրջանակներում մշակված հատուկ ծառայությունները նորարարական լուծումների օրինակներ են, որոնք մշակվել են սոցիալական տնտեսության կողմից՝ աշխատանք-կյանք ներդաշնակությունը քաջալերելու:
9. Առողջ, անվտանգ և լավ հարմարեցված աշխատանքային միջավայր և տվյալների պաշտպանություն	Սոցիալական տնտեսության ձեռնարկությունները ստեղծում են աշխատանքային միջավայր, որը հաշվի է առնում անբարենպաստ պայմաններում հայտնված անձանց կարիքները: ՍՏՁ-ները ոչ միայն բավարարում են ստանդարտները, այլ նաև հաշվի են առնում անվտանգության վարքականոնները և լուծումներ փնտրում աշխատավայրում աշխատողների հետ մասնակցային կառավարման միջոցով:
Սոցիալական պաշտպանություն և ներառում	
10. Հաշմանդամություն ունեցող անձանց ներառում	Սոցիալական տնտեսության ձեռնարկությունների թիրախ խմբերը կարող են ներառել հաշմանդամություն ունեցող անձանց: Իսկապես չափազանց կարևոր է աշխատանքի հնարավորություն ընձեռել բոլորին:

Մաս 2: Ինչպես է Կարիտասը գործնականում աշխատում սոցիալական տնտեսության համատեքստում

Ներածություն

Մինչ այս պահը մենք առնչվեցինք սոցիալական տնտեսության կարևորությանը, և թե ինչ կապ ունի այն Կաթողիկե սոցիալական ուսմունքի, Կարիտասի սկզբունքների և Սոցիալական մոդելի, ՄԱԿ-ի Օրակարգ 2030-ի և Սոցիալական իրավունքների եվրոպական հիմնասյան հետ: Հետևելով այս ընդհանուր հեռանկարին՝ այժմ կանդրադառնանք այն հարցին, թե ինչպես Կարիտաս կազմակերպությունները կարող են ակտիվ դեր խաղալ ներկայիս տնտեսությունը սոցիալական և մարդակենտրոն տնտեսության վերափոխելու հարցում: Այս վերափոխումը հիմնականում իրականացվում է նոր տեսակի ձեռնարկությունների /սոցիալական տնտեսության ձեռնարկությունների/ միջոցով, որոնց հիմնական նպատակն է ստեղծել դրական սոցիալական ազդեցություն՝ եկամուտները առավելագույնի հասցնելու փոխարեն:

Կարիտասն աջակցում է հազարավոր մարդկանց գտնելու իրենց ուղին աղքատության կարգավիճակից և անտեսվածությունից դուրս գալու հարցում՝ Եվրոպական աշխարհամասում հարյուրավոր սոցիալական տնտեսության նախաձեռնություններ իրականացնելով: Մինչ առավել հումանիստական տնտեսության խթանումը միևնույնն է բոլոր նախաձեռնությունների համար, պրակտիկան ցույց է տալիս, որ Կարիտաս կազմակերպությունները տեղում ներդնում են բազմազան հստակ գործողություններ, որոնք աջակցում են սոցիալական տնտեսության զարգացմանը:

Կարիտաս կազմակերպությունները գործում են ռեգիոնալ, ազգային և վերազգային շրջանակներում: Կան մի շարք ներքին և արտաքին գործոններ, որոնք ներառում են.

- Տեղական և ազգային բարեկեցության համակարգ և իրավական դրույթներ, որոնք թույլ են տալիս, աջակցում են կամ խթանում են ոչ պետական կառույցներին ապահովելու սոցիալական ծառայություններ, ստեղծելու և ուղիղ ղեկավարելու սոցիալական տնտեսության ձեռնարկություններ:

- Ազգային Կարիտասի դերը որպես բարեգործական կազմակերպություն: Որոշ երկրներում Կարիտասը տրամադրում է հատուկ սոցիալական ծառայություններ, մի այլ տեղում հանդես է գալիս որպես քաղաքական քաղաքացիական քարոզչության դերակատար: Տեղեր կան, որտեղ գործունեությունը ներառում է երկու գործողություններն էլ:

- Կաթողիկե եկեղեցու պատմությունը և ներկայությունը տվյալ երկրում քննարկելու մեկ այլ գործոն է: Ամբողջ երկրի տարածքում բազմաթիվ ծուխեր ունենալը կամ փոքր եկեղեցի լինելը կարող է ակնհայտորեն ձևավորել այն եղանակը, որով Կարիտասը խթանում է սոցիալական տնտեսության ձեռնարկությունները:

- Ազգային, հանրային և մասնավոր ֆոնդերի առկայությունը ևս կարևոր գործոն է:

- Քննարկման ենթակա մյուս գործոնը ՍՏՁ-ների մշակութային և քաղաքական ճանաչումն է՝ որպես նախաձեռնություններ և սոցիալական համախմբվածություն ստեղծող մի համայնքի:

Կարիտաս կազմակերպությունները կարող են ակտիվ դեր ունենալ սոցիալական տնտեսության զարգացման գործում և՛ սեփական ձեռնարկություններն ստեղծելու միջոցով, և՛ աջակցելով մյուսներին հիմնադրելու և զարգացնելու ՍՏՁ-ներ: Կարիտասի կողմից իրականացվող նախաձեռնությունների բազմազանությունը կարող է խմբավորվել հիմնական գործողությունների երկու տեսակի կազմի մեջ.

1. Խթանել էկոհամակարգ, որտեղ ՍՏՁ-ները կարող են զարգանալ.
Կարիտասն աջակցում է այնպիսի իրավիճակների և հանրային դերակատարների, որոնք կարող են ֆասիլիտացնել կոլեկտիվ ռեսուրսների արդյունավետ կառավարումը, որը կխթանի տարբեր շահագրգիռ կողմերի միջև երկխոսությունը և զարկ կտա նորարարությունների՝ ստեղծելու բարենպաստ միջավայր սոցիալական տնտեսության զարգացման համար:

2. Ուղիղ ստեղծել և ղեկավարել սոցիալական տնտեսության ձեռնարկություններ.
ՍՏՁ-ները ուղիղ ֆինանսավորվում և/կամ ղեկավարվում են Կարիտասի, հիմնադրամի կամ մեկ այլ Կարիտասի հետ առնչություն ունեցող կառույցի կողմից: Գլխավոր նպատակն է որոշակի սոցիալական կարիքի բավարարման համար գտնել նորարարական լուծում /օրինակ՝ երկարաժամկետ գործազուրկ մարդկանց ինտեգրել աշխատաշուկա/՝ միևնույն ժամանակ վաճառելով ապրանքներ և ստեղծելով եկամուտ հետագայում տվյալ կամ մեկ այլ ՍՏՁ-ի կամ այլ ծառայությունների մեջ վերաներդրվելու նպատակով: Կան երեք ընտրության տարբերակներ՝ վերաներդնել աճ ապահովելու համար, վերաներդնել այլ ոլորտներում դիվերսիֆիկացվելու համար կամ ներդրում կատարել այլ ծրագրերի մեջ:

Գործողությունների վերջին երկու տեսակները լրացուցիչ են: Կազմակերպության կողմից ուղիղ ՍՏՁ-ներ ստեղծելն ու կառավարելը ևս կարող են խթանել պետական և մասնավոր դերակատարներին ստեղծելու նոր իրավական ու ֆինանսական հնարավորություններ ՍՏՁ-ների համար և ներդրումներ կատարել ավելի լավ էկոհամակարգ ստեղծելու, որտեղ սոցիալական տնտեսության ձեռնարկությունները կարող են զարգանալ: Այսպես թե այնպես, տարբեր շահագրգիռ կողմերի միջև երկխոսության խթանումը և բարենպաստ միջավայր ստեղծելուն ուղղված ջանքերը կհանգեցնեն ՍՏՁ-ների զարգացման համար նոր հնարավորությունների առաջացմանը, որոնք հետագայում կարող են հնարավորություն ընձեռել Կարիտասին ստեղծելու և կառավարելու սոցիալական տնտեսության ձեռնարկություններ:

Հաջորդ պարագրաֆներում մենք ավելի մոտիկից կուսումնասիրենք երկու տարբեր գործողությունները, ինչպես նաև դրանք հաջողությամբ իրականացնելու անհրաժեշտ գործընթացներն ու քայլերը: Ներքևում ներկայացվում են ուղեցույցներ, որոնք հիմնված են մեր փորձի վրա և կարող են օգնել Կարիտաս կազմակերպություններին զարգացնելու և հզորացնելու սոցիալական տնտեսությանն առնչվող իրենց աշխատանքը:



2.1. ԽԹԱՆԵԼ ԷԿՈՀԱՄԱԿԱՐԳ, ՈՐՏԵՂ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ ԾԱՂԿԵԼ[19]

Էկոհամարգը կենսաբանության մեջ սահմանվում է որպես համակարգված ամբողջություն՝ կազմված տարբեր կենդանի օրգանիզմներից, որոնք հարաբերվում են միմյանց և միջավայրի հետ: Մենք այս սահմանումը կիրառում ենք նկարագրելու համար այն համակարգը, որ կարող է «ապրեցնել» Սոցիալական տնտեսությունը: Էկոհամակարգը որոշվում է հիմնական բաղադրիչներով.

1. անդամների միջև փոխհարաբերություններ,
2. նրանց համագործակցությունը արդյունքի հասնելու նպատակով,
3. այն համատեքստը, որտեղ տեղի են ունենում փոխհարաբերություններն ու համագործակցությունը,
4. անդամների բազմազանությունը:

Էկոհամակարգերը կենտրոնանում են երկխոսության և համագործակցության վրա /այլ ոչ մրցակցության, ինչպես լինում է ավանդական տնտեսական համակարգերի դեպքում/, որպեսզի ունենան ընդհանուր արդյունք: Ըստ նմանատիպ հեռանկարի՝ սոցիալական և տնտեսական արժեքները չեն կարող ստեղծվել մեկ բաղադրիչի կողմից, այլ պահանջում են տարբեր դերակատարների մասնակցություն և համակարգում: Ըստ էության՝ մենք կարող ենք էկոհամակարգը դիտարկել որպես համայնք: Այսպիսի էկոհամակարգում Կարիտասը կարող է ունենալ գլխավոր դեր:

Շատ կարևոր է չշփոթել էկոհամակարգի հայեցակարգը ցանցի հետ: Ցանցը նմանատիպ մասերից բաղկացած համակարգ է և միավորվում է հնարավոր դարձնելու հաղորդակցությունն ու համակարգված գործողությունները ներքին տարբեր մասերի միջև: Ցանցի առաջնահերթությունը ներքին հաղորդակցությունն է: Էկոհամակարգի առաջնահերթությունը եկամուտների ստեղծումն է որոշակի համատեքստում:

Ներդիր 8. Սոցիալական տնտեսության վերաբերյալ իրազեկության բարձրացում և ավելի բարենպաստ օրենսդրության խթանում՝ ELBA ծրագիր:

Հարավարևելյան Եվրոպա

«Էլբա» ծրագրի ամենագլխավոր բաղադրիչներից մեկը Հարավարևելյան Եվրոպայում սոցիալական տնտեսության համար պատշաճ էկոհամակարգի ստեղծումն է տեղական համայնքների ակտիվացման, տարբեր շահագրգիռ կողմերի միջև երկխոսության խթանման և ազգային կառույցներում սոցիալական տնտեսության ծաղկման համար աջակցող օրենսդրական շրջանակի ստեղծմանն ուղղված լոբինգի իրականացմամբ:

Ծրագիրը կանխատեսում է մի շարք տարածաշրջանային և ազգային մակարդակներում իրազեկվածության բարձրացման և լոբինգի գործողություններ /ինչպես, օրինակ՝ կոնֆերանսներ, տոնավաճառներ/ իրականացված 7 տարբեր երկրներում: Արդյունքում՝ 2016 թվականին Կոսովոյի կառավարությունը որոշեց կազմել ՍՏՁ-ների մասին օրենքի սևագիր տարբերակը և մանդատ տվեց Կարիտասի ցանցին՝ օրենքի առաջարկը վերանայելու: Այս կարևոր առաջադրանքի իրականացման համար Կարիտասը ներգրավեց փորձագետների Իտալիայի կոոպերատիվների ֆեդերացիայից և իտալական օրենսդրության խորհրդատուների շահույթ չհետապնդող ոլորտից:

«Էլբա» ծրագիրն սկսվել է 2015 թվականին որպես համատեղ առաջարկ Հարավարևելյան Եվրոպայի Կարիտաս կազմակերպությունների միջև տարածաշրջանում սոցիալական տնտեսության և սոցիալական նորարարությունների նախաձեռնությունների զարգացման համար, որը պետք է ծառայեր որպես գործիք՝ խթանելու ամենախոցելի խմբերի մարդկանց սոցիալական ներառումը: Ի հավելումն վերևում նկարագրված գործընթացի՝ մյուս գործողությունները ներառում են դասընթացներ և աշխատարաններ, ինչպես նաև գոյություն ունեցող սոցիալական ձեռնարկությունների, ծրագրերի ուսումնասիրություն, որոնք ներուժ ունեն հետագայում վերաճելու Սոցիալական տնտեսության:

Ստեղծվել է նաև ֆոնդ ֆինանսապես աջակցելու ՍՏՁ-ների ստարտափներին: Հետևյալ երկրների Կարիտաս կազմակերպությունները ներգրավված են ծրագրում. Ալբանիա, Ավստրիա, Բոսնիա և Հերցեգովինա, Բուլղարիա, Ֆրանսիա, Հունաստան, Իտալիա, Կոսովո, Մոնտենեգրո, Սերբիա, Իսպանիա և ԱՄՆ:

Ավելին կարող եք իմանալ կապ հաստատելով նշված էլեկտրոնային հասցեով՝
project.elba@gmail.com

2.1.1. Գործարկել էկոհամակարգը

Որպեսզի կառուցել այսպիսի էկոհամակարգ և ստիպել, որ այն աշխատի, շատ կարևոր է հաշվի առնել երեք հիմնական բաղադրիչներ /շահագրգիռ կողմեր, համագործակցություն և նորարարություն/ և զարգացնել գործողություններ դրանց շուրջ:

ա. Ճանաչել Ձեր շահագրգիռ կողմերին

- Էկոհամակարգում հնարավոր է ճանաչել բազմաթիվ և բազմազան մասնակիցների՝ շահագրգիռ կողմերի, որոնք իրագործում են բազմաթիվ և ոչ ամբողջապես համահունչ նպատակներ[20], որոնք պետք է դասակարգել ըստ իրենց դերի և գործառույթների՝ վերջնական արդյունքների հասնելու համար:

- **Ուղիղ և անուղղակի շահառուներ**. անհատներ, հանրային և մասնավոր սուբյեկտներ, որոնք պրոդուկտի /հաճախորդ/ կամ ծառայությունների /օգտվողներ/ թիրախն են: Նրանք նաև կարող են ներգրավվել պրոդուկտի պատրաստման և ծառայության մատուցման գործընթացի մեջ:

- **Գործընկերներ**. անհատներ, հանրային և մասնավոր սուբյեկտներ, որոնք կիսում են միևնույն տեսլականը և արտադրում են ապրանքներ և մատուցում ծառայություններ, որոնք նաև կիրառելի են այլ ապրանքների և ծառայությունների ստեղծման համար: Նրանք կարող են դառնալ ցանցի/կոնսորցիումի անդամ:

- **Ռեսուրսների մատակարարներ /լայն առումով/**. անհատներ, պետական կամ մասնավոր սուբյեկտներ, որոնք կարող են արտադրել և/կամ մատակարարել օգտակար նյութեր, տրամադրել միջոցներ կամ աշխատանք կատարողներ /օրինակ՝ մարդկային, ֆինանսական, անշարժ գույքի/:

բ. Կառուցել արդյունքակենտրոն համագործակցություն

Սոցիալական տնտեսության ձեռնարկությունները ստիպված են մրցակցել դասական այլ բիզնեսների հետ միևնույն արդյունաբերության կամ նմանատիպ արդյունաբերության շրջանակներում, որոնք առաջարկում են նմանատիպ պրոդուկտ կամ ծառայություն:

Ավելին, ՍՏՁ-ները գեներացնում են սոցիալական ազդեցություն: Բարդ կառուցվածք ունեցող շուկայում կայունությունը պահպանելու համար չափազանց կարևոր է ՍՏՁ-ների միջև համակարգված համագործակցության և սիներգիաների ստեղծումը:

Ի հավելումն նշենք, որ առանձին ՍՏՁ-ներն ավելի շահեկան դիրքում կլինեն, եթե նրանք կապված են էկոհամակարգի, որի հետ կիսում են միևնույն արժեքները: Համընդհանուր արժեքների վրա հիմնված այս ագրեգացիան յուրաքանչյուր ձեռնարկության կողմից մշակված պրոդուկտի և ծառայության համար կստեղծի հավելյալ արժեք:

Ներդիր 9. Իրազեկվածության բարձրացում և քարոզչություն սոցիալական տնտեսության համար ավելի բարենպաստ օրենսդրության համար. Յուլես

Լյուքսեմբուրգ

Յուլեսը /Սոցիալական և համերաշխության տնտեսության Լյուքսեմբուրգյան ֆեդերացիան/ ստեղծվել է 2013 թվականին: Նրա նպատակը երկակի է. համախմբել սոցիալական տնտեսության ոլորտում ակտիվ դերակատարներին Լյուքսեմբուրգում, ինչպես նաև դառնալ արտոնյալ զրուցակից պետական և կառավարական մարմինների համար: Կարիտաս Լյուքսեմբուրգը Յուլեսի հիմնադիր անդամներից մեկն է: Հենց սկզբից կազմակերպության նախագահումն իրականացվել է Կարիտաս Լյուքսեմբուրգի ներկայացուցչի կողմից: Ասոցիացիայի մեջ իր ունեցած մշտական և ներառական ներդրման շնորհիվ Կարիտաս Լյուքսեմբուրգը մեծ ներդրում է ունեցել վերջին տարիներին Լյուքսեմբուրգում սոցիալական տնտեսության հայեցակարգի ձևավորման ու համախմբման մեջ:

Մի քանի կոնֆերանսներ են կազմակերպվել և հրատարակություններ են կատարվել սոցիալական տնտեսության մասին իրազեկվածության բարձրացման համար, ինչպես նաև համապատասխան օրենսդրության բարելավման նպատակով: 2015 թվականին Յուլեսը մեծ ներդրում ունեցավ Լյուքսեմբուրգի կողմից Եվրամիությունը նախագահելու գործում և 2017 թվականին Լյուքսեմբուրգի Զբաղվածության նախարարարությունը և Միջազգային զբաղվածության կազմակերպությունը միասին հնարավոր դարձրին «Սոցիալական տնտեսության» ամառային դպրոցի կազմակերպումը Լյուքսեմբուրգում: Յուլեսի ամենամեծ ձեռքբերումներից մեկը 2016 թվականի նոյեմբերին Լյուքսեմբուրգի խորհրդարանի կողմից օրինագծի ընդունման գործընթացի մեջ ակտիվ ներգրավումն է՝ նոր իրավական սուբյեկտ ստեղծելու համար, որը ճանաչում է սոցիալական ազդեցություններ ունեցող ընկերություններին: Նոր օրինագծով Լյուքսեմբուրգի տնտեսության մեջ ճանաչվեց սոցիալական համերաշխության դերը: Յուլեսը ուղղակի և անուղղակի ներկայացնում է սոցիալական տնտեսության 300 ձեռնարկություն, որոնք ունեն 20000-ից ավել աշխատողներ, և դարձել է սոցիալական տնտեսության ներկայացուցիչ ազգային մակարդակում:

Բարենպաստ էկոհամակարգի կառուցումը բարդ գործընթաց է, որը պահանջում է մշտական երկխոսություն նոր և շատ տարբեր դերակատարների միջև: Դա է պատճառը, որ հաճախ ոլորտներում հանդիպում են քիչ թե շատ ֆորմալ խմբեր կամ ցանցեր, որտեղ զարգանում են սոցիալական տնտեսության ձեռնարկությունները: Այս խմբերն ի վիճակի են համակարգելու գործողությունները, ներկայացնելու հետաքրքրություններն ու մասշտաբավորելու նորարարությունները:

Էկոհամարգի շրջանակներում համագործակցություն կառուցելու համար շատ կարևոր է հստակ պատկերացնել հետևյալ կետերը.

1. Ի՞նչ տեսակի փոփոխության ենք ուզում հասնել:

- Ինչո՞ւ ենք մտածում, որ մեր միջամտությունները շահավետ են այն փոփոխության համար, որին ուզում ենք հասնել:
- Այս միջամտությունները կհանգեցնե՞ն լայնամասշտաբ փոփոխությունների:
- Ի՞նչ դաշինքներ են պետք ստեղծել տեսանելի ազդեցություն ունենալու համար:
- Ի՞նչ ռազմավարություններ են պետք կիրառել:
- Ինչպիսի՞ գործողություններ են պետք:

2. Ո՞րն է սպասված ազդեցությունը:

- Փոփոխությունը գործարկելու համար առաջին առաջադրանքը, որը պետք է կատարել, ազդեցությունը և հետագա քայլերը սահմանելն է:

3. Ո՞ւմ համար են անհրաժեշտ բանալի թեմաները:

- Ստեղծել համագործակցություններ Ձեր իսկ ցանցի ներսում:
- Ովքե՞ր կարող են ստեղծել մարդկային և ֆինանսական ռեսուրսներ:
- Ովքե՞ր կարող են հավաքական շահերի համար ստեղծել ծառայությունների մոդելներ:
- Ովքե՞ր կարող են արագացնել ռեսուրսների վերամշակումն ու փոխանցումը:
- Ովքե՞ր են շահառուները, որոնք էկոհամակարգից ինչ-որ բան են վերցնում և միևնույն ժամանակ կարող են ներդրում անել:

գ. Եղե՛ք նորարար

Սոցիալական տնտեսության ձեռնարկությունները խթանող էկոհամակարգի ստեղծման ժամանակ նորարարական բաղադրիչը չափազանց կարևոր է: Գործընթացը, պրոդուկտը կամ հենց ծառայությունը, նույնիսկ նոր գործիքը կարող են նորարարական լինել:

- Նորարարությունը գործընթացի մեջ. էկոհամակարգի սուբյեկտների միջև երկխոսության նորարարական ձևերի ստեղծում:
- Նորարարությունը պրոդուկտի կամ ծառայության մեջ. ներկայացնել նոր գաղափար նոր կայուն պրոդուկտի կամ ծառայության համար, որը սահմանում է դերակատարների միջև վարքագծի նոր տարրեր:
- Նոր գործիքներ. ապահովել բաց ենթակառուցվածք /օրինակ՝ ֆիզիկական կամ թվային հարթակ/, որն առաջարկում է սոցիալական տնտեսության ձեռնարկությունների զարգացման բաց աղբյուր: Այն կապահովի նոր պրոդուկտի կամ ծառայության ճանաչելիությանը և նաև կունենա համախառն դեր պոտենցիալ շահագրգիռ այլ կողմերի համար:

Ներդիր 10. Նորարարությունը գործընթացում. «Սոսիետես»

Հարավարևելյան Եվրոպա

«Սոսիետես» ծրագրի շրջանակում 450.000 եվրո է տրամադրվել ֆինանսապես աջակցելու /ենթադրամաշնորհային սխեմայով/, ստեղծելու և ընդլայնելու ՍՏՁ-ները, որոնք խթանում են հաշմանդամություն ունեցող անձանց ներառումը և տնտեսական հզորացումը: Ֆոնդն աջակցել է 25 ՍՏՁ-ների Ալբանիայում, Բոսնիա և Հերցեգովինայում, Կոսովոյում, Մոնտենեգրոյում և Սերբիայում:

«Սոսիետես»-ը (Աջակցություն ՔՀԿ-ներին՝ տեխնիկական հմտությունների զարգացման, հաշմանդամություն ունեցող անձանց ներառման և ԵՄ չափանիշների կիրառման համար Հարավարևելյան Եվրոպայում) տարածաշրջանային չորսամյա ծրագիր է, որի նպատակն է ցանցերի, ՔՀԿ-ների, համայնքային կազմակերպությունների հզորացումը իրենց փորձի և գիտելիքների ամրապնդման միջոցով քաղաքականության մշակման գործընթացների վրա ազդեցություն ունենալու և սոցիալական ներառման քաղաքականություններն առաջ մղելու համար: Նախագիծը ֆինանսավորվում է Եվրոպական հանձնաժողովի կողմից՝ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների տարածաշրջանային և թեմատիկ ցանցերի աջակցության ծրագրի շրջանակներում: Ծրագրի հիմնական գործընկերներն են Կարիտաս Ալբանիան, Բոսնիան և Հերցեգովինան, Կոսովոն, Մոնտենեգրոն և Սերբիան:

Ավելին տե՛ս.
www.projectsocieties.org

Ներդիր 11. Նորարարություն արտադրանքի կամ ծառայության մեջ – Ֆա Բենե

Իտալիա

«Ֆա Բենեն» նախաձեռնություն է, որի շրջանակներում հավաքագրվում է թարմ և որակյալ չվաճառված սնունդ Իտալիայի Թուրին քաղաքի շուկաներից: Այս սնունդը այնուհետև բաժանվում է տնտեսապես դժվարին վիճակում գտնվող ընտանիքներին: «Ֆա Բենե»-ի նորարարությունը փոխադարձությունն է. սնունդ ստացած ընտանիքները պարտավորվում են ներդնել իրենց գիտելիքներն ու հմտությունները իրենց թաղամասի զարգացման մեջ: Փոխադարձության գործողությունները կարող են լինել՝ օգնություն հանրային միջոցառումների ժամանակ, կանաչ տարածքների և փողոցների արտակարգ պահպանություն և մաքրություն, սոցիալական գործունեության ընթացքում աջակցություն (օրինակ՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար), համայնքային խոհարարություն և այլն:

Փոխադարձությունը ենթադրում է ճանաչել շահառուներին ոչ միայն որպես օգնության կարիք ունեցող մարդանց, այլ նաև որպես ռեսուրսների, որոնք կարող են իրենց ժամանակը և հմտությունները տրամադրել համայնքին՝ միևնույն ժամանակ ամրապնդելով իրենց ինքնավստահությունը: Այս կերպ փոխադարձությունը վերակառուցում է սոցիալական կապերը և աջակցում է համայնքին, քանի որ ընդհանուր բարօրության ընկալումը մեծանում է բնակիչների կողմից դրա նկատմամբ տածած խնամքի միջոցով: «Ֆա Բիենի» հիմնական գործընկերը Կարիտաս Իտալիան է:

Ավելին տե՛ս.
http://www.fabene.org/

Ներդիր 12. Նոր գործիքներ. SEIDs Hub

Միացյալ Թագավորություն

«SEIDs Hub» (ինկուբատոր) «Սոցիալական ձեռնարկությունների համայնքային կենտրոն» է, որն առաջարկում է ռեսուրսների, ներշնչանքի և համագործակցության եզակի հնարավորություն այն մարդկանց համար, որոնք ունեն սոցիալական տնտեսության ձեռնարկության գաղափար և ցանկանում են ուսումնասիրել և զարգացնել այն: Հաբը /Hub»/ ՍՏՁ համայնքին տրամադրում է համատեղ աշխատավայր՝ Հաբի աշխատակազմի, բիզնես մենթորների, սեմինարների, պաշտոնական և ոչ պաշտոնական ուսուցման հնարավորությունների և խոշոր միջոցառումների աջակցությամբ:

Հաբի աշխատակազմն աջակցում է բիզնես գաղափարների պլանավորմանը և փորձարկմանը, բիզնես հայեցակարգի նախագծմանը, ինչպես նաև ուղեկցում հաճախորդներին գաղափարից մինչև ազդեցություն: «SEIDs» կամ «Սոցիալական ձեռնարկությունների գաղափարների զարգացումը» Կարիտաս Վեստմիստերի սոցիալական նորարարության և ձեռնարկատիրական ռազմավարությունն է: Ռազմավարությունը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից.

- Ապրանքների և ծառայությունների մշակում, որոնք կարող են շուկա դուրս գալ.
- գործընկերություններ այլ սոցիալական ձեռնարկությունների և ընկերությունների հետ.
- սոցիալական ձեռնարկություններից ծառայությունների և ապրանքների ձեռքբերում.
- սոցիալական ձեռնարկությունների հաբի (ինկուբատոր) հիմնում՝ սոցիալական ձեռնարկությունների հնարավորությունները խթանելու և բարձրացնելու համար:

Ավելին տե՛ս.
https://www.seids.org.uk/home.php

2.1.2. Կառավարության դերը էկոհամակարգի զարգացման մեջ

Սոցիալական տնտեսության ձեռնարկությունները կարող են բախվել մի շարք խոչընդոտների, որոնք խանգարում են նրանց զարգացմանը: Կառավարությունները ունեն այդ խոչընդոտները վերացնելու իշխանություն ու պատասխանատվություն և կարող են շատ օգտակար լինել այնպիսի էկոհամակարգերի ստեղծման մեջ, որտեղ սոցիալական տնտեսության ձեռնարկությունները կարող են ծաղկել: Սոցիալական տնտեսության ձեռնարկությունների զարգացման համար անհրաժեշտ են հինգ հիմնական պայմաններ, որոնց ազգային կառավարությունները կարող են ուղղակիորեն աջակցել.

1. Սոցիալական տնտեսության ձեռնարկությունների համար իրավական և կարգավորող շրջանակ, որն ապահովում է համահունչություն և թափանցիկություն.

2. Ֆինանսական միջոցների հասանելիություն տարբեր տեսակի աղբյուրներից.

3. շուկաներին հասանելիություն, հատկապես՝ պետական գնումներով.

4. բիզնեսի աջակցման կառուցվածքներ.

5. որակավորման բարձրացում և հետազոտություն, ներառյալ քաղաքականության մշակման համագործակցություն գործընկերությունների միջոցով:

Հետևյալ հարցերի քննարկումն ու պատասխանները կօգնեն որոշելու սոցիալական տնտեսության ձեռնարկությունների զարգացման համար անհրաժեշտ քաղաքականությունները, պայմաններն ու աջակցող կառույցները Ձեր երկրում: Այս հարցերի և պատասխանների շուրջ մտածելով՝ Դուք պետք է ավելի լավ հասկանաք այն գործոնները, որ առավելապես աջակցում են Սոցիալական տնտեսության ձեռնարկությունների զարգացմանը, և թե ինչպես պետք է ձևավորվի Ձեր տեղական էկոհամակարգը:



Թարմ և որակյալ սննդի հավաքում տեղական շուկաներում՝ «Ֆա Բեբե»-ում, Թուրինում, Իտալիա: Լուսանկարը՝ Լաուրա Կանտարելլայի

Ձեր երկրի առկա էկոհամակարգի վերլուծության համար ուղղորդող հարցեր

ա. Որոշե՛ք Ձեր երկրում սոցիալական տնտեսության ձեռնարկության (ՍՏՁ) սահմանումը, ինչպես նաև քաղաքականությունները և իրավական շրջանակը: Այս նպատակով օգտակար հարցեր կարող են լինել.

1.Արդյոք Ձեր երկրում գոյություն ունի՞ քաղաքականությունների շրջանակ կամ հատուկ օրենսդրություն սոցիալական տնտեսության ձեռնարկությունների (ՍՏՁ) համար: Որո՞նք են հիմնական տարրերը:

2.Արդյոք հնարավո՞ր է պարզել սովորական օրենսդրության մեջ ՍՏՁ-ներին առնչվող կանոններ: Եթե այո՛, որո՞նք են հիմնական տարրերը:

3.Արդյոք գոյություն ունի՞ խումբ, որը խթանում է համապատասխան օրենսդրությունն այս առումով: Եթե այո՛, ովքե՞ր են նրանք և ի՞նչ են ներկայացնում:

4.Արդյոք Ձեր երկրում գոյություն ունի՞ իրավական գործընթաց, որը թույլ է տալիս իրականացնել սոցիալական գործունեություն:

բ. Որոշե՛ք Սոցիալական տնտեսության ձեռնարկությունների համար հանրային աջակցություն տրամադրելու գործընթացը: Քննարկվող հարցերն են.

1.Արդյոք Ձեր երկրում պետական հաստատությունների կողմից հետաքրքրություն կա՞ ՍՏՁ-ների զարգացման աջակցման հարցում: Եթե այո՛, որո՞նք են հիմնական տարրերը:

2. Որո՞նք են ՍՏՁ-ների համար հանրային աջակցման մեխանիզմները (ֆինանսավորման միջոցներ կամ նախաձեռնություններ սկսնակ ձեռնարկությունների համար, երաշխիքային ֆոնդեր, ֆոնդեր խոցելի խմբերի զբաղվածության համար, ներդրողների և ձեռնարկատերերի համընկնում, բիզնես պլանավորման և միջազգային ցանցի աջակցության ծրագրեր, համալսարանների աստիճաններ կամ այլ մասնագիտական վերապատրաստումներ):

3. Համաձայն Ձեր հատուկ թեմայի՝ նշեք գիտական հետազոտության փորձագետներին ու հետազոտական խմբերին Ձեր երկրում: Վերջին երեք տարում այս թեմայով կազմակերպվե՞լ է որևէ համաժողով /գրոհների կոնվենցիաներ/: Կարո՞ղ են արդյոք այդ համաժողովների զեկույցներն ու փորձագետները օգտակար լինել:

4. Որո՞նք են ԵՄ ներկայիս աջակցման ծրագրերը, և ինչպե՞ս են դրանք կիրառվել Ձեր համատեքստում:

գ. Որոշե՛ք Ձեր երկրում Սոցիալական տնտեսության ձեռնարկությունների ցանցերը: Օգտակար կլինի պարզել.

1. Ձեր երկրում ՍՏՁ-ների և սոցիալական ընդգրկման հիմնական ցանցերը, որոնք առնչվում են Ձեր հատուկ թեմային:

2. Կայքեր, որոնք ներկայացնում են լավ փորձեր, որոնք կարող են տեղայնացվել Ձեր տարածաշրջանում:

դ. Վերլուծե՛ք Սոցիալական ներդրումների շուկան.

1. Որոշել Սոցիալական տնտեսության ձեռնարկություններում ներդրողներին:

2. Կազմել հիմնադրամների ցանկ, որոնք կարող են տրամադրել դրամաշնորհներ/ֆոնդեր և որոշել դրանց ֆինանսավորման չափանիշները:

3. Կազմել Ձեր երկրում ՍՏՁ համակարգի հիմնական դերակատարների քարտեզը, որոշել նրանց անունները և մակարդակը (տեղական, ազգային, միջազգային):

ե. Ձեր երկրում գործող Սոցիալական տնտեսության ձեռնարկությունների քարտեզագրում և քննարկում.

1. Արդյոք Ձեր երկրում գոյություն ունի՞ գործող Սոցիալական տնտեսության ձեռնարկությունների տվյալների բազա: (Ստուգե՛ք նախարարություններում, գործակալություններում, առևտրի պալատներում, ՔՀԿ-ներում և այլն):

2.2. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՈՒՄ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ[21]

2.2.1 Գնահատում

Սոցիալական տնտեսության ձեռնարկությունների բազմաթիվ օգուտները, որոնք նկարագրված են վերևում, կապված Կարիտաս կազմակերպությունների հետ, կարող են ներշնչել անհրաժեշտ վստահություն՝ նման ձեռնարկություն ստեղծելու ուղղությամբ գործողություն ձեռնարկելու համար: Հաջորդ երկու բաժինները՝ շուկայի գնահատման և բիզնես պլանի պարունակության վերաբերյալ կարող են լրացուցիչ օգնություն տրամադրել՝ ընդգծելով այն, ինչը պետք է նախապես ուսումնասիրվի:

Այս ուղեցույցը, բնականաբար, նախատեսված է ավելի մանրամասն աջակցություն տրամադրելու համար ձեռնարկություն սկսելու վերաբերյալ Ձեր մտորումներում:

Մոտիվացիան և առաքելության հայտարարությունը
Առաքելության հայտարարությունը վերաբերում է այն նպատակներին, որոնք Դուք մտադիր եք իրականացնել երկարաժամկետ հեռանկարում: Դուք պետք է գնահատեք, թե ինչու եք ցանկանում սկսել Սոցիալական տնտեսության ձեռնարկություն, և ինչպես է դա ամրապնդված Ձեր կազմակերպության արժեքների և հիմնական առաքելության մեջ:

Մի քանի հարցերի պատասխանելը կարող է դառնալ օգտակար մեկնարկի գրավական.

- Արդյոք սա մեր կազմակերպության համար առաջնահերթ սոցիալական խնդիրներից մե՞կն է, որ ցանկանում ենք լուծել:
- Արդյոք սոցիալական տնտեսության ձեռնարկությունը կլինի՞ ավելի արդյունավետ, քան ավանդական բարեգործական մոտեցումը:
- Արդյոք շահառունե՞րն են նախատեսվող սոցիալական տնտեսության ձեռնարկության հիմնական թիրախը, թե՞ ձեռնարկության նպատակը բարեգործությանը սուբսիդիաներ տրամադրելն է: Երկու մոտեցումներն էլ օրինական են, բայց կհանգեցնեն տարբեր կառուցվածքների:

Կարևոր է հասկանալ Ձեր մոտիվացիան և դրդապատճառները Սոցիալական տնտեսության ձեռնարկություն սկսելու համար: Ձեզ անհրաժեշտ կլինի հաղթահարել տարբեր պահանջների լայն շրջանակ, հաճախ շատ սահմանափակ ռեսուրսներով: Ահա թե ինչու մոտիվացիայի գնահատումը մի գործոն է, որի վրա պետք է ծախսել նշանակալի էներգիա ոլորտում ճանապարհորդության սկզբում: Ընտրելով սոցիալական նպատակները, որոնք ցանկանում եք լուծել, փորձեք միաժամանակ շատ խոչընդոտներ չլուծել, այլ կենտրոնացեք մեկի վրա և բոլոր մյուս գործոնները դասավորեք առաջնահերթության հիերարխիայում:

Շուկայի գնահատում
Որպես առաջին քայլ՝ Դուք պետք է հասկանաք այն միջավայրը, որտեղ մտադիր եք գործունեություն ծավալել: Գնահատեք «խաղի կանոնները», ինչպես, օրինակ՝ իրավական շրջանակը, կանոնակարգերը, հարկերը և քաղաքական դաշտը: Շուկայի պահանջը և հնարավորությունների շրջանակը որոշելու համար նախ պետք է հնարավորինս ճշգրիտ նկարագրեք Ձեր հաճախորդներին: Ըստ Ձեր ռեսուրսների և նախընտրած մեթոդի՝ կարող եք դա պարզել՝ ինքնուրույն ուսումնասիրություն կատարելով ոլորտում կամ վերանայելով այն, ինչ ուրիշները արդեն իսկ հայտնաբերել են (գրասեղանի հետազոտություն): Ձեր բացահայտումները պետք է հանգեցնեն Ձեր հաճախորդների հատկանիշների և թվաքանակի իրատեսական գնահատմանը: Այսպիսով, Դուք համատեղ ձևավորում եք ապրանքը կամ ծառայությունը նախատեսված վերջնական օգտատերերի հետ: Այս կերպ Դուք ստանում եք ավելի իրական պատկեր՝ (ա) այն ապրանքի կամ ծառայության մասին, որը ցանկանում եք վաճառել հաջողության հասնելու համար, և (բ) Ձեր սոցիալական տնտեսության ձեռնարկության պատմության մասին, որը պետք է լուսաբանել (տե՛ս «Մարքեթինգ և հաղորդակցություն»):

Երկրորդ, քանի որ Դուք գործում եք մրցակցային միջավայրում, անհրաժեշտ է ստանալ հստակ պատկերացում այն մասին, թե ինչ են առաջարկում այլ մատակարարները: Փորձեք պարզել այլ ընկերությունների փորձառությունները. ի՞նչ մարտահրավերների են նրանք բախվել, և ի՞նչ գործոններ են նպաստել նրանց հաջողությանը: Ձեր մոտեցման կամ կազմակերպության առանձնահատուկ կողմերի սահմանումը Ձեր պլանավորման կարևոր տարրն է[22]: Միջավայրում, որտեղ ավելի ու ավելի շատ մատակարարներ նույն բանն են վաճառում, դժվար է գտնել եզակի վաճառքի կետ, որը իսկապես Ձեր ապրանքը կամ ծառայությունը մյուսներից դարձնում է մյուսներից տարբեր: Ձեր մոտիվացիան լուսաբանելը, այսինքն՝ ինչու եք անում այն, ինչ անում եք, նույնպես կարող է ձեզ առանձնացնել մյուս մատակարարներից: Սոցիալական ազդեցությունը, որը Դուք ստեղծում եք, հզոր ակտիվ է, որը գրավում է հաճախորդներին և ներդրողներին (տե՛ս նաև «Մարքեթինգ և հաղորդակցություն» բաժինը): Ամփոփելով կարելի է եզրակացնել՝ երբ գնահատում եք շուկան, մի՛ գերագնահատեք Ձեր շուկայի մասշտաբները և անպայման ընդունեք հնարավոր մրցակցությունը[23]:

Ռիսկեր
Մինչև Սոցիալական տնտեսության ձեռնարկություն հիմնելը Դուք պետք է ուշադրություն դարձնեք այն ամենին, ինչը կարող է խնդիրներ առաջացնել, և ինչպես մեղմել ռիսկերը: Ռիսկերի վերաբերյալ հասուն հայեցակարգի առկայությունը և դրանց հաղթահարման պլանը Ձեր բիզնեսը ավելի գրավիչ կդարձնեն ներդրողների համար: ՍՏՁ-ների խնդիրներից մեկը շահառուներին ներգրավելը և նրանց լիազորելն է՝ մեկ կողմից, իսկ մյուս կողմից՝ շահույթ ստանալը:

Դժվարությունները սոցիալական առաքելության և ֆինանսական եկամուտների միջև հավասարակշռություն գտնելու հարցում կարող են հանգեցնել հիմնական սոցիալական գործունեությունից բիզնես կողմին անցմանը: Սա կարող է բացասական ազդեցություն ունենալ հաճախորդների վրա, և անձնակազմը կարող է հեռանալ բիզնես մշակույթի պատճառով: Մյուս կողմից՝ ՍՏՁ-ների համար ամենակարևոր ռիսկերից մեկը կայուն չլինելն է սկզբնական ներդրումից հետո:

Գործընկերություններ և համագործակցություններ
Գնահատեք Ձեր ցանցը և ստուգեք, թե որ ռեսուրսներն են արդեն առկա: Հաշվի առեք ողջ ռեսուրսներն ու մարդկային կապիտալը ինչպես կազմակերպության ներսում, այնպես էլ դրա սահմաններից դուրս: Դուք կարող եք գտնել զգալի թվով հնարավոր դաշնակիցներ, ուստի փորձեք ռազմավարորեն ուսումնասիրել, թե որ գործընկերություններն են կարևոր և օգտակար (տե՛ս նաև «Էկոհամակարգը»):

2.2.2. Իրագործում. Բիզնես պլանի զարգացում

Բիզնես ծրագիրը կօգնի Ձեզ անցնելու բիզնես պլանավորման հիմնական ոլորտներով, որոնք Ձեզ անհրաժեշտ են Սոցիալական տնտեսության ձեռնարկություն ստեղծելու համար: Այն պարունակում է այնպիսի ասպեկտներ, ինչպիսիք են Ձեր նախատեսած ապրանքի կամ ծառայության նկարագրությունը, բիզնեսի վարման ձևը և ռեսուրսների կառավարման մեթոդները: Սա կօգնի Ձեզ կանխատեսելու ռիսկերը: Այն նաև Ձեր բիզնեսի գաղափարը և դրա սոցիալական օգուտը մյուսներին, ֆինանսավորողներին, գործընկերներին և ներդրողներին հաղորդելու միջոց է: Բիզնես ծրագրի բովանդակության մասին պատկերացում կազմելու համար մենք ներկայացրել ենք, մեր կարծիքով, ամենակարևոր տարրերը: Սոցիալական բիզնես ծրագիրը գրելու համար կարող եք օգտագործել հետևյալ կանվասը: Այն ներկայացնում է սոցիալական տնտեսության ձեռնարկության ենթադրական օրինակ՝ ալյուրից պատրաստված ապրանքների արտադրություն, և ստեղծում է աշխատանքային հնարավորություններ աշխատաշուկայից դուրս մնացած մարդկանց համար: Դուք կարող եք նաև առցանց գտնել տարբեր ձևանմուշներ[24]:

Ձեր բիզնես գաղափարը, արտադրանքը կամ ծառայությունը
Սկսեք Ձեր բիզնես գաղափարից և Ձեր բիզնեսի սոցիալական նպատակից: Բացատրեք, թե ինչո՞ւ եք ցանկանում սկսել Սոցիալական տնտեսության ձեռնարկություն, ովքե՞ր կշահեն, ովքե՞ր կլինեն Ձեր հաճախորդները, և ինչ եք Դուք վաճառելու: Ցույց տվեք, որ ուսումնասիրել եք շուկան, և կա պահանջարկ Ձեր ապրանքների և ծառայությունների նկատմամբ: Այստեղ Դուք պետք է գտնեք հավասարակշռություն Ձեր մոտիվացիայի և սոցիալական ազդեցության միջև, որը ցանկանում եք ստեղծել մի կողմից, և Ձեր ապրանքի պահանջարկի վերաբերյալ իրատես լինելու՝ մյուս կողմից: Հաշվարկեք Ձեր արտադրանքի գինը և Ձեր բիզնեսի ծախսերը[25]: Հետո մտածեք, թե ինչու հաճախորդները կընտրեն Ձեզ, այլ ոչ թե Ձեր մրցակիցներին: Լավ ապրանք մատակարարելը Ձեր ապրանքի կամ ծառայության մարքեթինգի ամենահզոր ձևերից մեկն է: Հնարավոր հաճախորդները միայն մեկ անգամ կօգտվեն Ձեր ձեռնարկության սոցիալական նպատակից, բայց հետո, երբ հասկանան, որ Ձեր առաջարկածը չի բավարարում իրենց՝ լավ ապրանքի սպասումները, այլևս չեն օգտվի:

Սոցիալական բիզնես պլան-կանվասի օրինակ

Գործընկերներ

Իրականացում
- «Բի» և «Սի» ճարտարապետական արվեստանոց
- Կամավոր փորձագետներ

Ֆինանսներ
- Հովանավոր մասնագիտացված խոհանոցային տեխնիկայի համար
- Կառավարություն /տարածքների վերանորոգման համար պետական աջակցություն/

Հաղորդակցություն
- «Դանդաղ սննդի» ցանց
- Լրատվամիջոցներ/մամուլ
- Տուրիստական գրասենյակ

Առևտուր
- Տեղական մատակարարներ
- Համագործակցող ընկերություններ-վաճառք ճաշարաններում
- Ռեստորաններ
- Գինեգործների ցանց

Մասնագիտացված ներդիր
- Զբաղվածության ազգային գործակալություն
- Զբաղվածության մասնավոր գործակալություններ

Գործողություններ

Բացառապես ձեռքով պատրաստված բարձր որակի, թարմ պաստայի արտադրություն:

Պաստայի վաճառք /տեղում, ներմուծել կամ առաքել պահանջարկի դեպքում/:

Պաստայի վաճառք այլ խանութներ:

Խոհարարական աշխատարանների կազմակերպում, աշխատարաններ զբոսաշրջիկների համար:

Ռեսուրսներ

- Ծրագրի հաջողության համար անձնվեր ղեկավար
- Բանիմաց, համակարգված անձնակազմ
- Բազմամասնագիտական անձնակազմի պրոֆեսիոնալ ինտեգրում
- Տեղական լոգիստիկա

Արտադրանք կամ ծառայություն

Ալյուրից բոլոր արտադրանքները
- Թարմ, չեփած և եփած պաստա
- Սոուսներ
- Պիցցա, պաստայից և հացից գնդիկներ պատրաստ եփելու
- Պատվերով ծննդյան տորթեր
- Օրվա դեսերտ

Խոհարարական աշխատարաններ

Գինու ուսումասիրման և գաստրոտուրիզմ- մի խումբ տուրիստների համար գինեգործների ցանցի հետ համագործակցությամբ մշակված հայեցակարգ

Քայլ 2. սոուսներ, ապուրներ, ջեմեր, ալյուրից այլ պրոդուկտներ և այլն:

Ստրուկտուրալ ծախսեր

Նախնական ներդրման ծախսեր
- Տարածքների և տեղական սարքավորումների վերանորոգում
- Պրոֆեսիոնալ խոհանոցային սարքավորումներ
- Աշխատավարձային ծախսեր

Գործառնական ծախսեր
- Աշխատանքային կապիտալ /հումքի գնում/
- Հաղորդակցություն/գովազդայի ն, մարկետինգային ծախսեր/

Հաջողության հիմնական գործոններ

- Ուժեղ հաղորդակցման հմտություններ և վաճառքի փորձ ունեցող ղեկավար
- Բանիմաց և մոտիվացված թիմ
- Հաղորդակցման ոլորտում հաջողություն
- Վաճառքի ապրանքների գերազանց որակ
- Հաճախորդների կողմից դրական գնահատանք
- Վերանորոգման ծախսերի և տեղական սաքավորումների տեղադրման խոհեմ կառավարում

Եկամտի աղբյուրներ

Թարմ պատրաստված պրոդուկտների վաճառք
- Ռեստորաններ
- Առաքում մոտակայքում
- Սնունդ առաքումով կամ առանց առաքման
- (մասնավոր/ընկերություններ)

Հարաբերությունները հաճախորդների հետ

- Տեղեկագիր
- «Հավատարմության» քարտ
- Խոհարարական դասընթացներ /պաստա/ փոքր խմբերի համար (մեծահասակներ և/կամ երիտասարդներ)
- Միջոցառումներ
- Ընկերությունների համար պաստայի շուրջ թիմակառուցողական հմտություններ

Հաճախորդների սեգմենտավորում

- Տեղական բիզնեսների աշխատողներ
- Ուսանողներ/բարձր դասարանի աշակերտներ
- Հարևանություն և շրջակա տարածքների բնակիչներ
- Մսի և դելիկատեսների վաճառակետեր
- Սոցիալական բիզնեսին աջակցել ցանկացող մարդիկ
- Ազգային խոհանոցի սիրահարներ

Սոցիալական ազդեցություն

- Լավ վարձատրվող, երկարաժամկետ աշխատատեղերի ստեղծում գործազուրկների համար
- Աշխատատեղերի շրջանում աշխատանքից բավարարվածության բարձր մակարդակ
- Աջակցել երկարաժամկետ գործազուրկ մարդիկանց դրական կերպարին և աջակցել ուժեղ կողմերի զարգացմանը լայն հանրության շրջանակում

Տարածման ուղղություններ

- Բանավոր խոսք
- Սոցիալական մեդիա
- Առցանց հարթակներ
- Միջոցառումների պլանավորում
- Հեռախոսային հավելված
- Ստենդ շուկայում /Սուրբ ծննդյան, կիրակնօրյա/
- Թռուցիկներ, բրոշուրներ
- Տուրիստական գրասենյակ

Նախապայմաններ

- Իրավասու մարմինների կողմից ստացված թույլտվությունները (սննդի անվտանգություն, հիմնադրման թույլտվություն, ալկոհոլային խմիչքների վաճառք և այլն)
- Ծրագրի համար նպատակահարմար իրավաբանական անձի և իրավական դաշտի նույնականացում. տարաբնույթ տարբերակների դրական և բացասական կողմերի վերլուծություն
- Խորհրդակցություն Զբաղվածության ազգային գործակալության, էկոնոմիկայի նախարարի, իրավաբան փորձագետների և այլոց հետ:

Վաճառվում է թարմ չեփած ապրանքներ

- Մասնավոր հաճախորդներ խանութում կամ առաքման միջոցով
- Խանութներ
- Ինստիտուցիոնալ հաճախորդներ

Խոհարարության դասընթացներ

- Խոհարարության տեղական դասընթացներ
- գինեգործական և գաստրոնոմիական զբոսաշրջություն զբոսաշրջիկների խմբերի համար
- գինեգործների հետ համագործակցությամբ

Մարդկային ռեսուրսներ

Այն ռեսուրսներից, որոնց կարիքն առկա է, այսինքն՝ մարդիկ, շինություններ և նյութեր, մենք կենտրոնանում ենք մարդկանց վրա՝ որպես ամենակարևոր տարրերից մեկի: Մարդկային ռեսուրսների (HR) կառավարումը սոցիալական բիզնես պլանի մշակման ժամանակ ամենակարևոր ասպեկտներից մեկն է: Մարդկային ռեսուրսների կառավարումը վերաբերում է ճիշտ մարդկանց (կամավորներ և աշխատակիցներ) հավաքագրման և նրանց արտադրողականության ու դերերի կառավարման գործընթացին: Այն ներառում է նաև աշխատակիցներին մոտիվացնելու, նրանց ուսուցման ու զարգացման և կազմակերպությունից աշխատակիցների հեռացման գործընթացի արդյունավետ կառավարման գործողությունները:

Նրանց աշխատավարձերը պետք է հաշվարկվեն ընկերության ֆինանսական կատարողականի համաձայն: Ամենակարևորը՝ ձեռնարկությունը ղեկավարող անձը պետք է ունենա ապացուցված փորձ նախատեսված պրոդուկտի վաճառքի ոլորտում: Խորհրդատվական մարմնի պարտականությունն է ապահովել իրականացված գործողությունների համապատասխանությունը Կարիտասի արժեքներին: Ղեկավարը, որը պետք է ունենա ճշգրիտ փորձ կոնկրետ պրոդուկտի կամ ծառայության ոլորտում, և խորհրդատվական մարմնի անդամները պետք է օգնեն ձեռնարկության տեսլականը կապելու շուկայական պահանջների հետ՝ այդպիսով հասնելով ֆինանսական հավասարակշռության: Կրիտիկական է կառուցել լավ հավասարակշռված կառավարման թիմ հատկապես ՍՏՁ-ները ներդրողներին ներկայացնելիս:

Եկամուտների և ֆինանսավորման մոդել

Եկամտի մոդելն անդրադառնում է Ձեր բիզնես պլանի ֆինանսավորման հարցին: Նախ, մտածեք այն կապիտալի մասին, որն անհրաժեշտ է նախնական փուլում. ի՛նչ աղբյուրներ կան կապիտալի համար, և ինչպե՛ս եք այն ծախսելու: Դուք կարող եք օգտվել տարբեր աղբյուրներից, ներառյալ նվիրատուները, ներդրողները և վարկերը: Կարևոր հարցը, որ պետք է տաք, հետևյալն է. արդյոք հետ վերադարձած գումարները բավականաչափ եկամուտ կստեղծե՞ն և բավարար ներդրումներ կգրավե՞ն՝ Ձեր ծախսերը ծածկելու և Ձեր գործունեությունը զարգացնելու համար: Սոցիալական տնտեսության ձեռնարկություններին հատուկ է ինչպես ֆինանսական, այնպես էլ սոցիալական եկամուտների ստեղծումը: Ֆինանսական եկամուտը հեշտությամբ չափելի է: Անհրաժեշտ է գտնել սոցիալական ազդեցությունը չափելու ուղիներ: Մատակարարի վարկային պայմանները ֆինանսավորման համար կարևոր աղբյուր են համարվում: Ուստի, փորձեք գտնել միջուկային ֆինանսավորում՝ անհրաժեշտ սարքավորումներ գնելու և աշխատավարձեր տրամադրելու համար:
Եթե նվիրատուն կամ ներդրողը պատրաստ են ֆինանսավորելու ծախսերի կեսը, ապա ՍՏՁ-ն դառնում է արժեքավոր և պակաս ռիսկային սովորական ներդրողների համար[26]: Ներդրողների (և մատակարարների) համար կարևոր է ստանալ սոցիալական արդյունքները ճշգրիտ և թափանցիկ ձևով: Ուստի այս առումով օգտակար կլինի ձեր պլանում ներառել «սոցիալական ազդեցության շարունակական մոնիտորինգ և գնահատում» հասկացությունը:
Նվիրատուներից և ներդրողներից բացի՝ ֆինանսավորում ստանալու մեկ այլ հնարավորություն է ԵՄ-ն, ազգային կամ տարածաշրջանային ֆինանսավորման տարբերակները:

Ներդիր 13. Մարդկային ռեսուրսների կառավարում: «Մագդաս» հյուրանոց

Ավստրիա

2017 թվականին Կարիտաս Վիեննան մեկնարկեց «Magdas Services» սոցիալական տնտեսության բիզնեսը, որը առաջարկում է հարդարման և մաքրման ծառայություններ գրասենյակային շենքերի համար: 2018 թվականի կեսերից «Մագդաս սերվիս»-ի ավելի քան 30 շենքերում աշխատում էին 80 աշխատակից: «Մագդաս սերվիս»-ի սոցիալական ազդեցությունը շատ ավելին է, քան սահմանափակ հնարավորություններ ունեցող անձանց աշխատանք տրամադրելը: «Magdas Services»-ը առաջարկում է ընտանիքաեհն աշխատանքային պայմաններ՝ սահմանելով հարմար աշխատանքային ժամեր: Այս դեպքից քաղված ամենակարևոր դասերից մեկն այն է, որ կարևոր է ունենալ հյուրանոցային բիզնես ոլորտից փորձագետներ և աշխատակիցներ, որոնք պատասխանատու են աշխատաշուկայում ինտեգրվելու կամ մարդկանց աշխատանքի տեղավորելու համար: Մարտահրավերը սոցիալական ազդեցությունն առավելագույնի հասցնելն է՝ ընդգրկելով հնարավորինս շատ աշխատանք փնտրող անձանց, բայց նաև բավարար չափով լավ պատրաստված և փորձառու անձնակազմ ունենալ՝ բիզնեսը լավ վարելու, պակաս փորձառու անձնակազմին կրթելու և միաժամանակ հյուրերին բարձրակարգ ծառայություններ մատուցելու համար: «Մագդաս» հյուրանոցի համար ճիշտ հավասարակշռություն գտնելը որոշ ժամանակ պահանջեց. 2015 թվականին՝ բավականին հավակնոտ մեկնարկից հետո, թիմում սակավաթիվ մասնագետներ ունենալով, հյուրանոցի գործունեությունն այժմ կայուն է և բարեհաջող՝ ղեկավարվելով 14 մասնագետների և 20 փախստականների կողմից:

Ավելին տե՛ս.
http://www.magdas.at/hotel/ և
Կարիտաս Եվրոպայի կողմից թողարկված տեսանյութը. **https://bit.ly/2MYdU1X**

Ներդիր 14. Եկամտի և ֆինանսավորման մոդել. Սոցիալական ներդրման եկամտաբերության և ստեղծված սոցիալական արժեքի չափումը

Իսպանիա

Սոցիալական ներդրման եկամտաբերությունը /ՍՆԵ/ համակարգված մեթոդ է, որը սոցիալական, բնապահպանական, տնտեսական և այլ արժեքները ներառում է որոշումների կայացման գործընթացներում: Սոցիալական և բնապահպանական արդյունքների տնտեսական արժեքը բացահայտելու միջոցով ստեղծվում է ամբողջական պատկերացում այն մասին, թե արդյոք զարգացման նախագիծը կամ սոցիալական բիզնեսը օգտակար է և շահավետ: Այս տեսանկյունը նոր հնարավորություններ է բացում և հիմք է ստեղծում նորարարական նախաձեռնությունների համար, որոնք իսկապես նպաստում են դրական սոցիալական փոփոխություններին և աղքատության նվազմանը բոլորի համար[27]:

Որպես օրինակ՝ ստորև կարող եք տեսնել, թե ինչպես է SROI-ն օգտագործվել «Ֆորմասիո և Տրեբալլ» հիմնադրամի կողմից 2015 թվականին իր իրականացրած ողջ գործողությունների համար կատարված հաշվարկում: Այս հաշվարկը որակապես գնահատում է ազդեցությունները, մեխանիզմները և բարիքի տարածումը, որոնք ստեղծվում են շահառու տարբեր խմբերի օգտին, որտեղ հիմնադրամը գործունեություն է ծավալում: Այն նաև քանակապես գնահատում է ընկալված արժեքը՝ ցուցանիշների և փոխարինողների միջոցով՝ նշված շահառու խմբերի համար ստեղծված արժեքը մոնետիզացնելու նպատակով:

Կիրառված մեթոդաբանության արդյունքը կազմում է 17,357,940[28] եվրոյի միացյալ սոցիալական արժեք:

Ներդրման սոցիալական եկամտաբերությունը

Ընդհանուր արժեք

Ավելին տե՛ս.
https://www.formacioitreball.org/wp-content/themes/foritreball/pdf/Valor_Social/Valor_social_FiT.pdf

Մասշտաբավորման ռազմավարություն

Ձեր սոցիալական տնտեսության ձեռնարկությունը հաջողությամբ հիմնելիս հնարավոր է՝ ցանկանաք խթանել սոցիալական ազդեցությունը՝ մեծացնելով ծավալները: Կարող եք զարգացնել ձեռնարկությունը, օրինակ՝ նոր վայրեր բացելով, Ձեր մոդելը վերարտադրելով այլ կազմակերպությունների միջոցով, սոցիալական շարժում կազմակերպելով կամ նույնիսկ փոխելով ղեկավարման քաղաքականությունը: Բացի այն հարցին պատասխանելուց, թե ինչպես եք պատրաստվում մեծացնել ծավալները, կարևոր է նաև հասկանալ, թե ինչպես եք առավելագույնի հասցնելու ազդեցությունը ներդրումներ կատարելով և միևնույն ժամանակ պահպանելով այն արժեքը, որ փորձում եք ստեղծել և վերադարձնել ձեր ներդրողներին:

Ներդիր 15. Ընդլայնման ռազմավարություններ. ՄՈԴԱ-ՌԵ

Իսպանիա

2018 թվականին Կարիտաս Իսպանիան հիմնադրեց նոր բրենդ և հայեցակարգ՝ «ՄՈԴԱ-ՌԵ» անվանումով՝ նպատակ ունենալով ընդգրկել և ընդլայնել իր տեքստիլային Սոցիալական տնտեսության ձեռնարկությունները ողջ Իսպանիայի տարածքով: Այն ղեկավարում է օգտագործված հագուստի ամբողջական ցիկլը՝ հավաքագրում, դասակարգում, կրկնակի օգտագործում, վերամշակում և վաճառք՝ ստեղծելով և խթանելով երկրորդ ձեռքի հագուստի խանութների ցանցը: ՄՈԴԱ-ՌԵ-ի հիմնական նպատակներն են ստեղծել սոցիալական և կայուն աշխատանք ու խթանել խելացի սպառումը: Ընդհանուր շրջանակին հասնելու համար կատարված աշխատանքային և վերափոխման երկարատև գործընթացից հետո իսպանական թեմական 29 Կարիտասներ համատեղեցին իրենց ուժերը՝ ստեղծելու երկրորդ ձեռքի հագուստի վերամշակման նախագիծ՝ խիստ կայունության և բարոյական արժեքների չափանիշներով:

Այս ընդհանուր շրջանակը ապահովում է Սոցիալական տնտեսության ձեռնարկությունների տեսանելիությունը և նրանց ծավալած գործունեության ճանաչելիությունն ընդհանուր հանրության շրջանում: Նրանք կարող են նաև օգտվել ավելի համակարգված ազգային ռազմավարությունից: Այս գործոնները նպաստում են, որ յուրաքանչյուր Սոցիալական տնտեսության ձեռնարկություն լինի ֆինանսապես ավելի կայուն և գրանցի եկամտի ու մասշտաբների աճ, ինչն էլ հնարավորություն է տալիս աշխատանքով ապահովելու ավելի շատ մարդկանց, որոնք մեկուսացված են աշխատաշուկայից: Սա «ՄՈԴԱ-ՌԵ»-ի հիմնական նպատակն է: Տնտեսական կայունության հետ «ՄՈԴԱ-ՌԵ»-ն նաև հաստատել է համաձայնագրեր նորաձևության մասնավոր սեկտորի գործընկերների հետ, որպեսզի առաջ մղեն տեխնոլոգիական նորարարությունը հետազոտական նախագծերով, որոնք նպատակ ունեն ստանալու նոր տեքստիլ մանրաթելեր և ածանցյալներ օգտագործված հագուստից:

Ավելին տե՛ս.
http://www.modare.org/

Մարքեթինգ և հաղորդակցություն

Համապատասխան պատմության ստեղծումը հաճախորդների և ներդրողների (ներառյալ մատակարարները) համար էական է Ձեր էթիկական բրենդինգի տեսանկյունից: Որպես սկիզբ՝ կարող եք օգտվել լայնորեն ճանաչված «Մարքեթինգի Միքս»[29] մոտեցումից, որն օգնում է սահմանելու համապատասխան մարքեթինգային ռազմավարություն և այն վերածելու կոնկրետ գործողությունների պլանի: Հաճախորդներն ու ֆինանսավորողներն ավելի կապված կզգան Ձեր ձեռնարկության հետ, եթե նրանց ներգրավեք, օրինակ՝ խորհրդակցելով կամ պատմություններ կիսելով նրանց հետ: Այսպես, նրանք կարող են պարզապես հաճախորդներ լինելու փոխարեն դառնալ Ձեր նպատակների դեսպաններ: Հաղորդակցության ռազմավարությունները և Սոցիալական տնտեսության ձեռնարկության բրենդինգը կարևոր են դրա հաջողության և կայունության համար: Լավագույն բրենդը որոշելու համար կարող եք հաշվի առնել հետևյալ հարցերը.

- Պե՞տք է Ձեր բիզնեսը ներկայացնել հանրությանը որպես Կարիտաս բիզնես:
- Կցանկանայի՞ք զարգացնել նոր բրենդ, որը կներկայացնի Ձեր ՍՏՁ-ի (Սոցիալական տնտեսության ձեռնարկություն) արժեքները:
- Տարբեր բիզնես մոդելների առկայության դեպքում նոր բրենդը կօգտագործե՞ք, թե՞ կզարգացնեք նոր բրենդ յուրաքանչյուր մոդելի համար:

Բրենդինգի հետևյալ երեք տարբերակները մատչելի են.
1. Հիմնական բիզնեսը և դուստր ընկերությունները հետևում են Կարիտասի բրենդինգին: Կարիտասը հստակ աջակցում է բիզնեսին (Կարիտասի լոգո և այլն):

2. Ստեղծվում է նոր հիմնական բրենդ Ձեր ՍՏՁ-ի համար՝ ընդհանուր բրենդային ռազմավարություն բոլոր ՍՏՁ-ների և նրանց դուստր ընկերությունների համար:

3. Անհատականացված բրենդինգ. յուրաքանչյուր ՍՏՁ ունի իր բրենդը, որը չի հետևում ընդհանուր բրենդինգային ռազմավարությանը:

Բրենդը միշտ կապված է որոշակի արժեքների հետ: Հետևաբար, կարևոր է որոշել, թե որ արժեքները կներկայացնեն Կարիտասը, և որոնք՝ Ձեր սոցիալական բիզնեսը: Եթե արժեքները տարբեր են, նպատակահարմար կլինի զարգացնել տարբեր բրենդներ:

Ֆինանսական պլանավորումը

Լավ մտածված ֆինանսական պլանը ցույց է տալիս, որ Դուք հաշվի եք առել հնարավոր դժվարությունները և ունեք դրանք լուծելու ծրագիր: Դա օգնում է ավելի ճշգրիտ լինելու Ձեր ֆինանսական կանխատեսումների

Ներդիր 16. Բրենդավորում: Երեք հնարավոր ուղիները

Եվրոպայում Կարիտասի կողմից ֆինանսավորվող Սոցիալական տնտեսության ձեռնարկությունները ցույց են տալիս, որ բոլոր երեք տարբերակներն էլ իրականանալի են, և ընտրությունը կախված է մի քանի գործոններից, օրինակ՝ մատակարարվող ապրանքից կամ ծառայությունից և տվյալ երկրում կամ տարածաշրջանում Սոցիալական տնտեսության վերաբերյալ Կարիտասի հատուկ ռազմավարությունից:

1. Հիմնական բիզնեսը և դուստր ձեռնարկությունները հետևում են Կարիտասի բրենդավորմանը, օրինակ՝ Սերբիայում «ԷԼԻՈ»-ն (տե՛ս ներդիր 6):

«Էլիո» սոցիալական լվացքատները ֆոնդեր են ստեղծում, որոնք կրկին ներդրվում են Կարիտասի սոցիալական ծառայությունների մեջ (տնային խնամք և հաշմանդամություն ունեցող անձանց համար ցերեկային խնամքի կենտրոններ), որոնք շատ հայտնի և գնահատված են տեղի բնակչության կողմից: Այս դեպքում փաստը, որ «Էլիո» սոցիալական լվացքատները ֆինանսավորվում են Կարիտասի կողմից, տալիս է մրցակցային առավելություն ավանդական այլ լվացքատների նկատմամբ, քանի որ «Էլիո»-ի հաճախորդները (սովորաբար տեղի բնակիչները) հասկանում են, որ իրենց ընտրությունն օգնում է Կարիտասին մատուցելու ավելի որակով սոցիալական ծառայություն խոցելի բնակչության համար:

2. Ձեր Սոցիալական տնտեսության ձեռնարկության համար ստեղծվում է նոր հիմնական բրենդ, ինչպես ներկայացված է Ավստրիայում «Մագդաս»-ի օրինակով (տե՛ս ներդիր 4, 7, 13):

Կարիտաս Վիեննան որոշեց իր կողմից ղեկավարվող Սոցիալական տնտեսության ձեռնարկությանը տալ բրենդային անուն, որը կապ չունի «Կարիտաս»-ի հետ: Այլ անուն օգտագործելու պատճառներն էին՝ խուսափել Կարիտասի հիմնական բրենդի վրա բացասական ծանուցանիշների փոխանցման ռիսկից Սոցիալական տնտեսության ձեռնարկության ձախողման դեպքում և խուսափել Կարիտասի կողմից կազմակերպվող դրամահավաքի գործունեության վրա հնարավոր բացասական ազդեցությունից (եթե որոշ նվիրատուներ որոշեն նվազեցնել իրենց ներդրումները՝ տեսնելով, որ Կարիտասն իր սեփական բիզնեսներն է վարում):

Մեկ այլ պատճառ էր, որ հաճախորդները չպետք է ընկալեն Սոցիալական տնտեսության ձեռնարկությունը որպես սոցիալական նախագիծ, այլ ընկալեն որպես սովորական ընկերություն՝ բարձրորակ ծառայություններով: Հետևաբար, Կարիտաս Վիեննան իր Սոցիալական տնտեսության ձեռնարկությունն անվանեց «Մագդաս», որը ոչ միայն իգական տարածված անուն է (Մագդա), այլ նաև վիեննական բարբառով նշանակում է «Ես սիրում եմ դա»:

3. Անհատականացված բրենդավորում. յուրաքանչյուր Սոցիալական տնտեսության ձեռնարկություն ունի իր բրենդը, ինչպես, օրինակ՝ ՄՈԴԱ-ՌԵ-ն Իսպանիայում (տե՛ս ներդիր 15):

Միայն տեքստիլ վերամշակման ոլորտում աշխատող Սոցիալական տնտեսության ձեռնարկությունների համար եզակի բրենդավորում ունենալը (Կարիտասի հետ կապ չունեցող) օգնում է Կարիտասին կենտրոնանալու մարքեթինգային ռազմավարությունների վրա, որոնք հատուկ նախագծված են այդ ոլորտի համար և ուղղված են կոնկրետ թիրախային լսարանին:

Համաշխարհային ֆյուժն նախաճաշի պատրաստում Վիեննայի «Մագդաս» հյուրանոցում, Ավստրիա: Լուսանկարը՝ Մայքլ Մազոլի Մազոլի

Ֆինանսական պլանն այն հիմքն է, որ հաշվի առնելով՝ ներդրողները որոշում են կայացնում ֆինանսավորել Ձեր բիզնեսը, թե ոչ: Ուստի խորհուրդ է տրվում Ձեր կանխատեսումների վերաբերյալ ունենալ երկրորդ կարծիք: Դա կօգնի Ձեզ նկատելու այն խնդիրները, որոնք բաց եք թողել, կամ անհասկանալի են եղել: Ֆինանսական պլանավորումը սերտորեն կապված է իրականացման պլանի հետ, որը պատկերում է Ձեր նպատակները և կատարողականի ցուցանիշները: Համոզվելու համար ֆինանսական պլանավորումը կանխատեսում է նաև գնահատական, բայց եղե՛ք հնարավորինս ճշգրիտ և նախատեսե՛ք բյուջե անսպասելի ծախսերի և արտակարգ իրավիճակների համար, քանի որ վճարունակությունը կարևոր գործոն է:

Ֆինանսավորման հնարավորություններ[30]

Սոցիալական տնտեսության ձեռնարկություններին անհրաժեշտ է ֆինանսավորում տարբեր նպատակներով՝ ըստ իրենց գործունեության ոլորտի, բիզնես մոդելի և զարգացման փուլի: Ֆոնդերը հիմնականում օգտագործվում են աշխատանքային կապիտալի ֆինանսավորման, ակտիվների (գույք, սարքավորումներ կամ ոչ նյութական ակտիվներ) ձեռքբերման կամ աճի կապիտալի համար (բիզնեսի ընդլայնում, նորարարությունների ներդրում և այլն):

Սոցիալական տնտեսության ձեռնարկությունների ֆինանսավորման կարիքները բավարարելու և սոցիալական ու ֆինանսական միջոցների միջև եղած բացը լրացնելու նպատակով մշակված ֆինանսական գործիքների թիվը շարունակաբար աճում է: Ըստ էության, գոյություն ունեն երեք տեսակի գործիքներ՝ դրամաշնորհներ (նվերներ), պարտքային կապիտալ (վերադարձելի գումար) և կապիտալ (բաժնեմասեր):

- Դրամաշնորհները սովորաբար տրամադրվում են նախապես սահմանված ծրագրի կամ գործունեության ֆինանսավորման համար և չեն պահանջում վերադարձ:

- Պարտքային կապիտալը, ինչպես բանկային վարկերը, ապահովում է ձեռնարկատիրական ճկունության բարձր աստիճան և չի հանգեցնում սեփականության կորստի: Այնուամենայնիվ, այս առավելությունները գալիս են տոկոսների վճարման և անվտանգության ապահովման շնորհիվ:

- Սեփական կապիտալը չի ենթադրում ներդրված կապիտալի պարտադիր մարում, և տարեկան վճարումները կախված են ձեռնարկության շահույթից: Սա ֆինանսական առումով ավելի նպատակահարմար է, քան պարտքային կապիտալը: Այնուամենայնիվ, սեփական կապիտալի ներդրումը նշանակում է սեփականության թուլացում և ներդրողների համար վերահսկողության և ձայնի իրավունքի կորուստ:

Ստեղծելով համերաշխ համայնքներ և այն վայելելով Իտալիայի Թուրինի քաղաքի «Ֆա Բենե»-ում: Լուսանկարը՝ Անդրեա Լավալեի

Ֆինանսավորման գործիքներ

Պայմաններ սոցիալական ձեռնարկության համար	Նախապայմաններ ներդրողների համար	Գործիք
1. Դրամաշնորհներ		
Տևողություն՝ Միանվագ, եթե բազմակի չեն **Վճարումներ՝** Չկան **Վերադարձ՝** Չկա	Եթե անսահմանափակ չէ, օգտագործումը կարող է սահմանափակվել նախապես սահմանված աշխատանքով: Կարող է ունենալ բարձր դրամահավաքի և/կամ ժամանակի ծախսեր: Ցածր ձեռնարկատիրական ճկունություն	100 % ռիսկ Եթե նշված չէ, գումարը չծախսելու կամ սխալ բաշխելու դեպքում հետպահանջ չի լինի: Միակ վերադարձը սոցիալականն է:
2. Պարտքային կապիտալ (վերադարձվող ֆինանսներ)		
Տևողություն՝ 3-7 տարի, շենք գնելիս՝ մինչև 25 տարի **Վճարումներ՝** տոկոսների և հիմնական կապիտալի մարում **Վերադարձ՝** Այո՛	Եթե վճարումները կատարվում են պայմանագրով, ապա կպահանջվի ցածր ռիսկային ֆինանսական մոդել: Սեփականության իրավունքի /խախտման բացակայություն, մատակարարի լայն իրավունքներ չկատարման կամ ուշ վճարման դեպքում: Ձեռնարկատիրական ճկունություն ընդհանուր պայմաններում	Ներդրումները կարող են ապահովվել ակտիվներով: Դա կարող է նվազեցնել կորստի ռիսկը: Ավելի բարձր ռիսկ չապահովման դեպքում: Պարբերաբար վճարումները թույլ են տալիս ապահովել ֆինանսական կայունությանը: Սոցիալական և ֆինանսական եկամուտներ
3. Սեփական կապիտալ		
Տևողություն՝ Անսահմանափակ **Վճարումներ՝** Բաժանվում է, եթե շահույթի մեջ է **Վերադարձ՝** Ոչ	Սեփականության նվազեցում Շահույթի մասնակցություն Առաքելության ազդեցություն Օգտագործման ճկունություն	Քվեարկելու իրավունք և հնարավոր վերահսկողություն Շահույթի մասնակցություն Իրացվելիությունը սահմանափակվում է զրոյական իրացվելիությամբ / երկրորդային շուկա Երկարաժամկետ Բարձր ռիսկ, եթե մոդելը գործնականում փորձարկված չէ: Սովորաբար ազդեցությունը տեղի է ունենում առաջին հերթին:

Ի՞նչ է լինելու հաջորդիվ

Հույս ունենք, որ այս ձեռնարկն օգնեց Ձեզ և Ձեր կազմակերպությանն ավելի լավ հասկանալու սոցիալական տնտեսության էությունը և ավելի լայն տեսլական ձեռք բերելու այն տարբերակների վերաբերյալ, որոնք հասանելի են սոցիալական տնտեսության ձեռնարկություն սկսելու կամ ընդլայնելու համար:

Այս ձեռնարկը համապարփակ լինելու միտում չունի, այլ տալիս է մի քանի գործիքների մասին ընդհանուր պատկերացում, որոնք ընթերցողը կարող է հետագայում վերլուծել և օգտագործել՝ ըստ որոշակի հետաքրքրությունների: Այս ձեռնարկում նկարագրված են մի քանի նախաձեռնություններ՝ սոցիալական տնտեսության ձեռնարկությունների գաղափարը խթանելու և Կարիտասի կողմից ղեկավարվող սոցիալական տնտեսության ձեռնարկությունների մասին գործնական օրինակներ տալու նպատակով: Բացի այստեղ նշվածներից՝ Կարիտասը ղեկավարում է հարյուրավոր սոցիալական տնտեսության ձեռնարկություններ: Բացի այդ՝ գոյություն ունեն հազարավոր սոցիալական տնտեսության ձեռնարկություններ, որոնք կոնկրետ կապված չեն Կարիտասի հետ, բայց չափազանց արժեքավոր են: Հասկանալի պատճառներով մենք չենք կարողացել ներառել դրանք բոլորն այս ձեռնարկում, բայց խրախուսում ենք Ձեզ ուսումնասիրել դրանցից մի քանիսը և կապ հաստատել դրանց հետ՝ լրացուցիչ պատկերացում ունենալու համար՝ ոչ միայն հաշվի առնելով աշխարհագրական տարբերությունները, այլև մոտեցման և կարիքների ձևակերպումը:

Հույս ունենալով, որ այս ձեռնարկը կծառայի որպես մեկնարկային կետ Ձեր կազմակերպչական կարողությունները կառուցելու կամ բարելավելու համար սոցիալական տնտեսության ձեռնարկությունների կառավարման և խթանման գործում, ստորև նշվում են հնարավոր հաջորդ քայլերը:

Ի՞նչ կարող եք անել հաջորդիվ:

- Կարող եք խորացնել Ձեր գիտելիքները՝ սկսելով վերջնական նշումներում եղած տեղեկատվությունից և հղումներից կամ կապ հաստատելով այս ձեռնարկում նշված սոցիալական տնտեսության ձեռնարկությունների մենեջերների հետ:

- Կարող եք գնահատել Ձեր կազմակերպչական կարողությունները, սոցիալական կարիքները, որոնք կարող են լուծվել սոցիալական տնտեսության ձեռնարկության միջոցով, և այն փոփոխությունը, որին ցանկանում եք հասնել: Դուք կարող եք դա անել այս ձեռնարկում նշված գործիքներն օգտագործելով:

- Այն դեպքում, երբ Դուք արդեն ղեկավարում եք սոցիալական տնտեսության ձեռնարկություն, կարող եք գնահատել, թե արդյոք կան ընդլայնման կամ Ձեր պորտֆոլիոն դիվերսիֆիկացնելու հնարավորություններ: Եվ կրկին կարող եք դա անել այս ձեռնարկում նկարագրված գործիքներն օգտագործելով:

- Կարող եք գնահատել Ձեր տարածաշրջանում կամ երկրում առկա էկոհամակարգը: Կարող եք ավելի լավ ճանաչել Ձեր շահագրգիռ կողմերին, ինչպես նաև սոցիալական տնտեսության ձեռնարկությունների վերաբերյալ օրենսդրական շրջանակը, և կարող եք դա անել՝ պատասխանելով «Ձեր երկրում առկա էկոհամակարգը վերլուծելու ուղղորդող հարցերին»:

- Կարող եք նաև փնտրել լրացուցիչ աջակցություն, ուղեցույցներ և փորձագիտական գիտելիքներ: Կարիտասի ցանցում և դրանից դուրս կան բազմաթիվ հնարավորություններ ուսուցման, ուսումնական այցերի, ուղեկցման ծրագրերի և այլնի համար:

- Կարող եք նաև փնտրել գործընկերներ և ներդրողներ, որոնց նպատակն է հասնել տնտեսական, սոցիալական և շրջակա միջավայրի կայունությանը:

- Դուք կարող եք տեղեկություններ ստանալ Կարիտաս Եվրոպայի սոցիալական տնտեսության նախաձեռնությունների մասին՝ այցելելով մեր կայքը. **www.caritas.eu**

Եվ ամենակարևորը, Դուք կարող եք միանալ մեզ՝ տարածելով այն ուղերձը, որ **մարդկանց շահերից գերադասելը օգտակար է բոլորի համար**:

Այս աշխատանքն ունենալը նախևառաջ ինձ՝ որպես մարդու, հոր և ամուսնու, տալիս է արժանապատվություն և բավարարում է իմ աշխատելու ցանկությունը, քանի որ ես միշտ ինձ զգացել եմ որպես աշխատանք ունեցող անձ:

Մանոլո, վարորդ Կոմպարտե Լեոնում, ՄՈԴԱ-ՌԵ, Իսպանիա

Հղումներ

1. Ֆրանցիսկոս Պապ, 2015, «Laudato Si'», պարբերություն 56: Ինչպես Բենեդիկտոս XVI-ը «Deus Caritas Est» և «Caritas in Veritate» աշխատություններում, նա նույնպես քննադատել է փողի և շահույթի վրա հիմնված տնտեսությունը և կոչ արել նվիրվածության տնտեսության՝ որպես հակակշիռ հասարակության ֆինանսականացման աճին: «Caritas in Veritate», պարբերություն 36: Տե՛ս նաև Հավատքի ուսմունքի ժողով և Բազմակողմանի մարդկային զարգացման խթանման դիկաստերիա, 2018, «Oeconomicae et pecuniariae quaestiones - Էթիկական տարբերակումների համար մտորումներ ներկայիս տնտեսական-ֆինանսական համակարգի որոշ ասպեկտների վերաբերյալ»:

2. Բենեդիկտոս XVI Պապ, 2009, «Caritas in Veritate», պարբերություն 21: «Ներկայիս ճգնաժամը մեզ ստիպում է վերանայել մեր ուղին, սահմանել նոր կանոններ և հայտնաբերել նվիրվածության նոր ձևեր, հիմնվելով դրական փորձի վրա և մերժելով բացասականը: Ճգնաժամը, այսպիսով, դառնում է տարբերակումների հնարավորություն, որտեղ կարող ենք ձևավորել նոր տեսլական ապագայի համար: Այս ոգով, վստահությամբ այլ ոչ թե հրաժարմամբ, անհրաժեշտ է դիմակայել ներկա ժամանակի դժվարություններին»:

3. Տե՛ս նաև «Կարիտաս Եվրոպա»-ի կողմից արտադրված տեսանյութը «Ի՞նչ է սոցիալական տնտեսությունը» https://bit.ly/2oAetEa հասցեով և «Կարիտաս Եվրոպա»-ի կայքում սոցիալական տնտեսության վերաբերյալ հատվածը https://www.caritas.eu/policy-work/social-economy/ հասցեով:

4. Կաթոլիկ եկեղեցին երբեք չի կանգնել այս բանավեճի կողմերից որևէ https://www.caritas.eu/policy-work/social-economy/ մեկի՝ լիբերալիզմի և սոցիալիզմի/կոմունիզմի միջև իրենց բոլոր դրսևորումներով 20-րդ դարում: Եկեղեցին նաև չի ներկայացրել «Կաթոլիկ հասարակական ուսմունք»-ը (ԿՀՈՒ) որպես «երրորդ ուղի» դրանց միջև: «Sollicitudo rei Socialis», 1987, պարբերություն 41:

5. «Առանց մրցակցային շուկան վերացնելու այն պետք է պահել այն սահմաններում, որոնք այն դարձնում են արդար և բարոյական, և այդպիսով՝ մարդկային»: «Populorum Progressio», 1967, պարբերություն 61:

6. Կաթոլիկ Եկեղեցու Սոցիալական Ուսմունքի Ժողովածուն, որը հրատարակվել է 2004 թվականին Արդարության և Խաղաղության Պապական Խորհրդի կողմից, անդրադարձել է լայն շրջանակի սոցիալական և տնտեսական խնդիրներին ԿՀՈՒ-ի տեսանկյունից:

7. https://www.cordaid.org/nl/wp-content/uploads/sites/2/2016/08/Cordaid-social-entrepreneurship-and-catholic-social-thought.pdf

8. Հովհաննես Բաբտիստա Բ , կոպերատիվներին ուղղված ելույթ, Ֆաենզա, Իտալիա, 1986 թվականի մայիսի 10

9. Այս մտահոգություններն արտահայտվել են «Տնտեսական և ֆինանսական հարցերում, որոնք էթիկական պատկերացում են պահանջում ներկայիս ֆինանսատնտեսական համակարգի որոշ ասպեկտների վերաբերյալ», 2016թ. Հունվար. «Այն, ինչ ցավալիորեն կանխատեսվում էր մեկ դար առաջ, այսօր իրականություն է դարձել: Կապիտալ անուիտետը կարող է պահել և դուրս մղել աշխատանքից ստացված եկամուտը, որը հաճախ դուրս է գալիս տնտեսական համակարգի հիմնական շահերից: Հետևաբար, աշխատանքն ինքնին, իր արժանապատվության հետ մեկտեղ, ավելի ու ավելի է ենթարկվում մարդու անձի համար իր արժեքը որպես «լավ» կորցնելու և ասիմետրիկ սոցիալական հարաբերությունների շրջանակներում պարզապես փոխանակման միջոց դառնալու վտանգի»": 15) և «Բարոյապես անընդունելի է ոչ միայն շահույթ ստանալը, այլ անհավասարության օգտագործումը սեփական շահերի համար, հսկայական շահույթ ստանալը, որը վնասում է ուրիշներին.կամ օգտագործելով գերիշխող դիրքը շահույթ ստանալու համար ՝ անարդարացիորեն նվաստացնելով ուրիշներին, կամ հարստացնելով՝ վնասելով և ոչնչացնելով հավաքական ընդհանուր բարիքը" (պարագրաֆ 17)

10. «Կարիտաս Ֆրանսիան» կարծում է, որ էներգետիկ աղքատության մեջ ապրող մարդիկ այն մարդիկ են, ովքեր իրենց ֆինանսական ռեսուրսների ավելի քան 10% - ը ծախսում են էլեկտրաէներգիայի վճարների վրա:

11. Կարիտասի սոցիալական մոդելի մասին ավելին իմանալու համար կարդացեք Կարիտասի Եվրոպայի հրապարակումը. https://www.caritas.eu/social-justice-equality-europe-possible/

12. https://sustainabledevelopment.un.org/post2015/transformingourworld

13. Նույն բաժնում, պարագրաֆ 2

14. Ամբողջական աղյուսակը տե՛ս այստեղ ՝ ՄԱԿ-ի սոցիալական և համերաշխության տնտեսության աշխատանքային խումբ, սոցիալական և համերաշխության տնտեսության միջոցով օրակարգի իրականացում մինչև 2030 թվականը: http://unsse.org/wp-content/uploads/2014/08/Final_Position-Paper-SSE-and-SDGs_UNTFSSE.pdf

15. ՄԱԿ-ի սոցիալական և համերաշխության տնտեսության աշխատանքային խումբը, որն իրականացնում է 2030 թվականի օրակարգը սոցիալական և համերաշխության տնտեսության միջոցով http://unsse.org/wp-content/uploads/2014/08/Final_Position-Paper-SSE-and-SDGs_UNTFSSE.pdf

16. Laudato Si ոսպնյակի միջոցով վերլուծված մինչև 2030 օրակարգի տրանսֆորմացիոն սկզբունքների մասին ավելին իմանալու համար տես «Մասնակցություն մինչև 2030 օրակարգին Laudato Si ոսպնյակի միջոցով» հրապարակումը, որը գրվել է Կարիտասի մի քանի կազմակերպությունների մասնակցությամբ ամբողջ աշխարհում, որին կարելի է ծանոթանալ՝ մուտք գործելով հետևյալ հասցեով՝ https://www.caritas.eu/engaging-in-the-2030-agenda-through-the-lens-of-laudato-si/

17. https://ec.europa.eu/commission/priorities/deeper-and-fairer-economic-and-monetary-union/european-pillar-social-rights_en

18. EPSR-ում SEE-ների ներդրումներին մանրամասն ծանոթանալու համար խնդրում ենք ծանոթանալ ENSIE-ի զեկույցին, որը հասանելի է հետևյալ հասցեով՝ https://static1.squarespace.com/static/53da557be4b0202cfb098951/t/5a1ecb8be4966b13429fe6c1/1511967641117/ENSIE_European+Pillar+of+social+rights.pdf

19. Տիցիանա Չիամփոլինի «Կարիտաս Իտալիա»-ից այս գլխի համահեղինակն է:

20. Դոնալդսոն, Թ. & Պրեստոն, Լ. (1995): Սոցիալական հոգեբանություն. հայեցակարգեր, ապացույցներ և հետևանքներ: կորպորացիաներում շահագրգիռ կողմերի տեսություն. Կառավարման ակադեմիայի ակնարկ, էջ 70:

21. Դեն Բելոզոն (CSAN) այս գլխի համահեղինակն է.

22. Սա հայտնի է «Վաճառքի եզակի առաջարկ" (USP) տերմինով, որը նշանակում է ապրանքի կամ ծառայության իրական կամ ենթադրյալ օգուտ, որը տարբերակում է դրանք մրցակցային ապրանքանիշերից և գնորդին տալիս է տրամաբանական պատճառ ՝ դրանք այլ ապրանքանիշերից գերադասելու համար: http://www.businessdictionary.com/definition/unique-selling-proposition-USP.html

23. Որպես առաջին քայլ, մենք առաջարկում ենք հետևել Պորտերի հինգ սկզբունքներին ՝ Ձեր շուկան վերլուծելու համար. «Ռազմավարություն ձևավորող հինգ մրցակցային ուժեր», Harvard Business Review, Հունվար 2008 (Հատոր 88, թիվ 1), էջ 78-93

24. Օրինակ՝ https://medium.com/@kieron_75142/superhero-canvas-the-social-business-canvas-for-superheroes-62a101dd5c62

25. https://en.wikipedia.org/wiki/Margin_(finance) այն մասին, թե ինչպես կարելի է հաշվարկել և աշխատել մարժաների հետ:

26. https://hbr.org/2012/01/a-new-approach-to-funding-social-enterprises

27. Գտե՛ք հավելյալ տեղեկատվություն՝ անցնելով հղումով: https://www.betterevaluation.org/it/node/5070

28. https://www.formacioitreball.org/wpcontent/themes/foritreball/pdf/Valor_Social/Valor_social_2015.pf

29. 4P և 7P շուկայավարման խառնուրդի և սահմանման մասին ավելին իմանալու համար կարող եք այցելել http://marketingmix.co.uk/

30. Գործնական ուղեցույց սոցիալական ֆինանսավորման գործիքների և շուկաների զարգացման նախաձեռնությունների մշակման և իրականացման համար, էջ 95-96; ACT-Group (2018), Act Group-ի 2018-2021 թվականների ֆինանսավորման և ազդեցության աջակցության ռազմավարության մշակման ուղեցույց: Act-Group-ի 2018-2021 թվականների ֆինանսավորման և ազդեցության աջակցության ռազմավարության մշակման ուղեցույց:

«Եկեք փորձենք կառուցել հասարակություն և տնտեսական համակարգ, որտեղ ուշադրության կենտրոնում կլինեն մարդիկ և նրանց բարիքը, այլ ոչ թե փողը»:

Ֆրանցիսկոս պապ

Designed by Drench - **www.drench-design.com**

Rue de la Charité 43
1210 Brussels, Belgium
Tel: +32 (0)2 280 02 80
info@caritas.eu
www.caritas.eu

«Կարիտաս Եվրոպա»-ի «Մարդկանց գերադասելով շահույթից» Սոցիալական տնտեսության ձեռնարկը անգլերենից հայերեն թարգմանվել և հրատարակվել է EcoSE՝ «Սոցիալ-տնտեսական էկոհամակարգի զարգացում Ճամբարակ միավորված համայնքում» ծրագրի շրջանակում՝ «Քաղաքացիական հասարակության հզորացում ԱԼԳ երկրներում» ծրագրի ներքո: Ծրագիրը ֆինանսավորվել է Գերմանիայի կառավարության և համաֆինանսավորվել է Եվրոպական միության կողմից:

Բովանդակությունը պարտադիր չէ, որ արտահայտի «Կարիտաս Եվրոպա»-ի, Գերմանիայի Դաշնային Հանրապետության կամ ԵՄ կառավարության տեսակետները: